



«ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ



AGENTUR FÜR
QUALITÄTSSICHERUNG DURCH
AKKREDITIERUNG VON
STUDIENGÄNGEN E.V.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԻՆՍՏԻՏՈՒՑԻԱՆԱԼ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԶԵԿՈՒՅՑ

Փորձագիտական այց՝ մայիսի 26-30, 2025թ.

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՈՒՄԲ

Անդրե Վ. Հայնեման՝ Բրեմենի համալսարանի Դաշնային և տարածաշրջանային ֆինանսական փոխհարաբերությունների պրոֆեսոր, Գերմանիա

Աննե-Դյորոտե Բալքս՝ Հանովերի Լայբնիցի համալսարանի Որակի ապահովման կենտրոնի ղեկավար, Գերմանիա

Արփինե Հակոբյան՝ Վանաձորի պետական համալսարանի ուսանող, Հայաստան

Նաիրա Դերձյան՝ «Գրանտ Թորնթոն» ընկերության խորհրդատու, Հայաստան

Նոննա Խաչատրյան՝ Երևանի պետական համալսարանի Կառավարման և գործարարության ամբիոնի վարիչ, Հայաստան

Տատյանա Վոլկովա՝ Ռիգայի Բիզնեսի և Ֆինանսների դպրոցի Ռազմավարական կառավարման և նորարարությունների կառավարման պրոֆեսոր, Լատվիա

ՀԱՄԱԿԱՐԳՈՂՆԵՐ

Վարդուհի Գյուլազյան՝ ՈԱԱԿ խորհրդատու

Ռոննի Հայնցե՝ AQAS խորհրդատու

Բովանդակություն

I. ՆԱԽԱԲԱՆ.....	3
II. ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ.....	3
III. ԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱՏԵՔՍ.....	6
IV. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ.....	8
V. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ.....	10
1. ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐ.....	10
2. ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ.....	14
3. ԾՐԱԳՐԵՐԻ ՄՇԱԿՈՒՄ, ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՎ ԴԱԴԱՐԵՑՈՒՄ.....	17
4. ԾՐԱԳՐԵՐԻ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄ ԵՎ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՎԵՐԱՆԱՅՈՒՄ.....	21
5. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅՈՒՆ, ԴԱՍԱՎԱՆԴՈՒՄ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄ..	24
6. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ, ԱՌԱՋԱԴԻՄՈՒԹՅՈՒՆ, ՃԱՆԱՉՈՒՄ ԵՎ ՀԱՎԱՍՏԱԳՐՈՒՄ.....	27
7. ԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄ.....	33
8. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄ.....	36
9. ՌԵՍՈՒՐՍՆԵՐ ԵՎ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆ.....	39
10. ՀԱՆՐՈՒԹՅԱՆԸ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՈՒՄ.....	43
ՓՈՐՉԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....	46

I. Նախաբան

Գերմանիայի Կրթական ծրագրերի հավատարմագրման միջոցով որակի ապահովման գործակալությունը (AQAS) անկախ, ոչ առևտրային կազմակերպություն է, որն իր գործունեությունն իրականացնում է շուրջ 90 համալսարանների, կիրառական գիտությունների համալսարանների և գիտակրթական ասոցիացիաների աջակցությամբ: 2002 թվականից գործակալությունը ճանաչված է Գերմանիայի Հավատարմագրման խորհրդի (GAC) կողմից և հանդիսանում է բարձրագույն ուսումնական հաստատությունների և կրթական ծրագրերի հավատարմագրում իրականացնելու լիազորված կառույց:

AQAS-ը ստեղծվել և գործում է բարձրագույն ուսումնական հաստատությունների և գիտակրթական ասոցիացիաների շահերին սպասարկելու նպատակով: Գործակալության առաքելությունը բարձրագույն կրթական ծրագրերի և ուսուցման որակի ապահովումն ու շարունակական զարգացումն է: AQAS-ի առաքելությանը համահունչ՝ Գերմանիայի և Եվրոպայի լիազոր մարմինները (GAC և EQAR) հավաստել են, որ գործակալության հավատարմագրման գործունեությունը չի սահմանափակվում որևէ առանձին գիտակարգով, կրթական աստիճանով կամ բարձրագույն ուսումնական հաստատության տեսակով:

Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոնը (ՈԱԱԿ) 2008 թվականին ստեղծված անկախ կազմակերպություն է, որը հանդիսանում է Հայաստանի Հանրապետության արտաքին որակի ապահովման գործակալությունը: Նրա առաքելությունն է նպաստել բարձրագույն և մասնագիտական կրթության համակարգերի շարունակական որակի բարելավմանը՝ միաժամանակ խթանելով հաստատությունների ինքնավարությունն ու հաշվետվողականությունը: Ստեղծման պահից ի վեր, ՈԱԱԿ-ը հանդիսացել է ազգային մարմին՝ պատասխանատու բարձրագույն ուսումնական հաստատությունների և մասնագիտական ուսումնական հաստատությունների արտաքին որակի ապահովման գործընթացի համար, այդ թվում՝ հաստատությունների և ծրագրերի հավատարմագրման ոլորտում:

AQAS-ը և ՈԱԱԿ-ը հանդիսանում են ENQA-ի (Բարձրագույն կրթության որակի ապահովման Եվրոպական ցանց) լիիրավ անդամ և ներառված են EQAR-ում (Որակի ապահովման Եվրոպական ռեգիստր), ինչը վկայում է այն մասին, որ գործակալությունների կողմից կիրառվող ընթացակարգերը համահունչ են Եվրոպական բարձրագույն կրթական տարածքի որակի ապահովման չափորոշիչներին և ուղեցույցներին (ESG): Վերջիններս ընդունվել են բոլոնյան գործընթացին անդամակցող պետությունների կողմից՝ որպես ներքին և արտաքին որակի ապահովման միասնական հենք:

II. Հավատարմագրման ընթացակարգ

Սույն զեկույցը կազմվել է Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի ինստիտուցիոնալ արտաքին գնահատման արդյունքում:

1. Մոտեցում և մեթոդաբանություն

Եվրոպական Բարձրագույն կրթության ոլորտում ներքին և արտաքին որակի ապահովման ստանդարտներին ու ուղեցույցներին համապատասխան՝ AQAS-ի և ՈԱԱԿ-ի կողմից իրականացվող համատեղ ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացում համալսարանի որակի ապահովման համակարգը գնահատվել է՝ սինոփսիսի ենթարկված ինստիտուցիոնալ հավատարմագրման չափանիշների համաձայն: Կիրառված չափանիշները համահունչ են Եվրոպական չափորոշիչներին և ուղեցույցներին (ESG, 2015 թ. տարբերակ): ESG-ն ներքին և արտաքին որակի ապահովման չափանիշների ու ուղեցույցների ամբողջություն է Բարձրագույն կրթության ոլորտում: Այն պարտադիր բնույթ չի կրում, այլ հանդես է գալիս որպես ուղեցույց՝ ընդգրկելով Բարձրագույն կրթության որակի ապահովման և ուսումնասիրության միջավայրի կազմակերպման հիմնական ուղղությունները:

Համաձայն ESG-ի՝ ինստիտուցիոնալ հավատարմագրման չափանիշները հիմնված են որակի ապահովման հետևյալ չորս սկզբունքների վրա.

- Բարձրագույն ուսումնական հաստատությունները կրում են առաջնային պատասխանատվություն իրենց կրթական ծառայությունների որակի և դրա ապահովման համար,
- Որակի ապահովումն արձագանքում է Բարձրագույն կրթության համակարգերի, հաստատությունների, ծրագրերի և ուսանողների բազմազանությանը,
- Որակի ապահովումը նպաստում է որակի մշակույթի ձևավորմանն ու զարգացմանը,
- Որակի ապահովումը հաշվի է առնում ուսանողների, շահակիցների և հասարակության կարիքներն ու ակնկալիքները:

AQAS-ը և ՈԱԱԿ-ը մշակել են ինստիտուցիոնալ հավատարմագրման համար նախատեսված չափանիշների և ցուցիչների ամբողջություն: Հիմնվելով այս հավատարմագրման չափանիշների վրա՝ AQAS-ը և ՈԱԱԿ-ը համալսարանին տրամադրել են նաև ինքնավերլուծության զեկույցի կազմման ուղեցույց: AQAS-ի և ՈԱԱԿ-ի հիմնական մոտեցումն է, որ հավատարմագրման ընթացքում անհրաժեշտ է գնահատել՝ արդյոք հաստատության կողմից ընտրված մեխանիզմները, որոնք ուղղված են կրթական ծրագրերի որակի ապահովմանը, բավարար և համահունչ են: Այդ պատճառով AQAS-ը և ՈԱԱԿ-ը կենտրոնանում են Բարձրագույն ուսումնական հաստատությունների ուսումնասիրության գործընթացի պատշաճ մակարդակը ապահովող համակարգային մեխանիզմների վրա: Բացի այդ, համալսարանի կողմից ինքնավերլուծության զեկույցում ներկայացված նպատակները նույնպես ազդում են փորձագիտական խմբի գնահատման վրա, քանի որ դիմումներն ու գործընթացները պետք է դիտարկվեն հաստատության ռազմավարական նպատակների համատեքստում:

Հավատարմագրման ընթացակարգերում AQAS-ը և ՈԱԱԿ-ը հետևում են գործընկերային փորձագիտական գնահատման սկզբունքին: Որակի ապահովման արտաքին գործընթացներում ունեցած երկարամյա փորձի և միջազգային ցանցերում ակտիվ ներգրավվածության շնորհիվ՝ AQAS-ը և ՈԱԱԿ-ը փորձագետների հետ աշխատանքում

առաջնորդվում են Փորձագետների ընտրության Հավատարմագրման եվրոպական կոնսորցիումի սկզբունքներով:

Ներքին փուլ / Փորձագիտական խմբի գնահատման հիմքը

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանը ներկայացրել է ինքնավերլուծությունը, որտեղ նկարագրված են հաստատության հիմնական առանձնահատկությունները: Ինքնավերլուծությունում ներկայացվել են համալսարանի որակի կառավարման համակարգի գործառույթը, ինչպես նաև ուսուցման և ուսումնառության կազմակերպման գործընթացները: Բացի այդ, համալսարանը զեկույցին կցել է հավելվածներ՝ ավելի մանրամասն տեղեկատվություն և հիմքեր տրամադրելու, ինչպես նաև զեկույցում ներառված պնդումները հիմնավորելու և կիրառվող ընթացակարգերի գործնական իրագործումն ցույց տալու նպատակով:

Հավելվածում ներառված են եղել.

- ուսանողների դուրս մնալու ցուցանիշները,
- կրթական առաջարկները,
- բակալավրիատում դասավանդման և ընդունելության կարգավորումները,
- որակի ապահովման քաղաքականություններն ու մեխանիզմները,
- շրջանավարտների վերաբերյալ տեղեկատվությունը,
- ուսումնական պլանների մշակման և վերանայման ընթացակարգերը:

AQAS-ը մանրամասն ուսումնասիրել է համալսարանի ինքնավերլուծությունը, որը ներկայացվել էր 2025թ. փետրվարին՝ այն ամբողջականության, հասկանալիության և թափանցիկության տեսանկյունից: Հավատարմագրման ընթացակարգը պաշտոնապես մեկնարկել է AQAS-ի Մշտական հանձնաժողովի 2025թ. փետրվարի 24-ի որոշմամբ, ինչպես նաև 2025թ. փետրվարի 28-ի գրավոր ընթացակարգով: Ինքնավերլուծության վերջնական տարբերակը ներկայացվել է 2025թ. ապրիլին: Ինքնավերլուծությունը և ուղեկցող փաստաթղթերի փաթեթը գնահատվել են ՈԱԱԿ-ի կողմից՝ համաձայն Հայաստանի Հանրապետության պետական հավատարմագրման գործընթացի 37-րդ կետում սահմանված պայմանների, որոնք կարգավորում են ինքնավերլուծության վերադարձման հիմքերը, և ինքնավերլուծությունն ընդունվել է ՈԱԱԿ-ի կողմից:

Արտաքին փուլ / Փորձագիտական խումբ

Համաձայն AQAS-ի և ՈԱԱԿ-ի կողմից իրականացվող համատեղ ինստիտուցիոնալ հավատարմագրման սկզբունքների՝ ձևավորվել է փորձագիտական խումբը՝ պահպանելով անկախության, բազմազանության և համապատասխան փորձի ապահովման հիմնական պահանջները: Խմբի կազմում ընդգրկված էին.

- պրոֆեսոր՝ համալսարանների որակի կառավարման ոլորտի փորձագետ,
- պրոֆեսոր՝ համապատասխան ակադեմիական ոլորտից,
- պրակտիկ մասնագետ՝ որակի ապահովման ոլորտից,
- գործատու,

- ուսանող:

Համագործակցության սկզբունքների համաձայն՝ խմբի առնվազն երեք անդամներ ունեցել են տարածաշրջանային մասնագիտական փորձ, ինչը երաշխավորում է բարձրագույն կրթության ոլորտի համատեքստային և իրատեսական գնահատումը:

2025թ. ապրիլին Մշտական հանձնաժողովը հաստատել է վերը նշված փորձագիտական խումբը: AQAS-ը և ՈԱԱԿ-ը տեղեկացրել են համալսարանին փորձագիտական կազմի վերաբերյալ, և համալսարանը որևէ առարկություն չի ներկայացրել: Ինստիտուցիոնալ հավատարմագրման շրջանակում փորձագիտական գնահատման համար ընտրվել են հետևյալ կրթական ծրագրերը .

- «Տնտեսագիտություն» բակալավր,
- «Ֆինանսներ (ըստ ոլորտի)» բակալավր,
- «Կառավարում (ըստ ոլորտի)» բակալավր:

Ինքնավերլուծությունը և կից փաստաթղթերն ապահովել են ծրագրերի վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվությունը՝ AQAS-ի ծրագրային գնահատման ուղեցույցների համապատասխան:

Դիմումի ուսումնասիրությունից հետո փորձագետներն իրականացրել են նախնական գնահատում՝ առանձնացնելով հարցերը և լրացուցիչ ուսումնասիրության ենթակա փաստաթղթերը:

Փորձագիտական այցի ընթացքում քննարկումներ են կազմակերպվել համալսարանի ղեկավարության, որակի ապահովման ստորաբաժանման, ֆակուլտետների ղեկանների, դասախոսական կազմի, գործատուների և ուսանողների հետ: Այցի ավարտին փորձագետները համալսարանի ներկայացուցիչներին ներկայացրել են ամփոփ դիտարկումները:

Փորձագիտական խումբը պատրաստել է գնահատման զեկույցը, որի մեջ ներառված է նաև առաջարկություն AQAS-ի Մշտական հանձնաժողովին: AQAS-ը և ՈԱԱԿ-ը զեկույցը ուղարկել են համալսարանին 2025 թվականի սեպտեմբերին՝ հնարավորություն տալով ներկայացնել մեկնաբանություններ և դիտարկումներ զեկույցի վերաբերյալ:

III. Ազգային համատեքստ

Հայաստանի Հանրապետության կրթական համակարգը կազմված է 12-ամյա հիմնական և միջնակարգ կրթությունից (սկզբնական, հիմնական և ավագ դպրոց), մասնագիտական կրթությունից, բարձրագույն և հետբուհական կրթությունից: Բարձրագույն և հետբուհական կրթությունը կարգավորվում է Հայաստանի Հանրապետության Կրթության մասին օրենքով (1999) և Բարձրագույն և հետբուհական կրթության մասին օրենքով (2004), որոնք համահունչ են Բոլոնիայի գործընթացի հիմնական նպատակներին և Լիսաբոնյան կոնվենցիային: Կրթության և գիտության ոլորտում քաղաքականությունը Հայաստանի կառավարության անունից իրականացնում է Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը: Հայաստանի բարձրագույն կրթության համակարգը ներառում է՝

- 25 պետական և 25 ոչ պետական (մասնավոր) բարձրագույն ուսումնական հաստատություններ,
- 3 օտարերկրյա կրթական հաստատություններ,
- 1 օտարերկրյա ոչ պետական (մասնավոր) բուհ,
- ինչպես նաև 4 բուհ՝ պետական մասնակցությամբ:

Կրեդիտների փոխանցման և կուտակման եվրոպական համակարգը (ECTS) ընդունված է որպես ազգային կրեդիտային համակարգ Հայաստանում գործող բուհերի կողմից, և օգտագործվում է կրթական ծրագրերի մշակման և կրթական վերջնարդյունքների գնահատման համար: Կրեդիտները ցույց են տալիս ուսուցումը՝ ըստ սահմանված ուսումնառության արդյունքների և համապատասխան բեռնվածության: Մեկ ակադեմիական տարին համարժեք է 60 կրեդիտների և համապատասխանում է ուսանողի 1,800 ժամ բեռնվածությանը: Ակադեմիական տարին սկսվում է սեպտեմբերի 1-ին և բաղկացած է 2 կիսամյակներից՝ 20 և 22 շաբաթ տևողությամբ:

Բարձրագույն կրթությունն իրականացվում է երեք մակարդակով.

- Բակալավրի մակարդակ-ուսանողները ձեռք են բերում հիմնական գիտելիքներ, հմտություններ և կարողություններ ուսումը շարունակելու կամ աշխատանքի անցնելու համար: Բակալավրի աստիճանի որակավորումները (ՈԱՇ-ի և ՈԵՇ-ի 6-րդ մակարդակին համապատասխան) նախատեսում են 180–240 կրեդիտ՝ 3–4 տարի անընդմեջ ուսուցմամբ: Բակալավրի կրթության ընդունելության համար անհրաժեշտ նախապայման է միջնակարգ կրթության ավարտական վկայականի կամ մասնագիտական կրթության դիպլոմի առկայությունը:
- Մագիստրոսի մակարդակ-իրականացվում են շարունակական և ինտեգրված ուսումնական ծրագրեր, որոնք նպատակ ունեն տրամադրել խորացված գիտելիքներ, հմտություններ և ունակություններ՝ անկախ աշխատելու և դոկտորական ծրագրերում ուսույց շարունակելու համար: Մագիստրոսի ծրագիրն հաջողությամբ ավարտելուց հետո շնորհիվ ունենում որակավորումները համապատասխանում են ՈԱՇ-ի 7-րդ մակարդակին և համարժեք են ՈԵՇ-ի 7-րդ մակարդակին: Մագիստրոսի աստիճանի որակավորման համար սահմանված է 60–120 կրեդիտ՝ 1–2 տարվա լիաժամ ուսուցմամբ: Մագիստրոսի կրթական ծրագրերին դիմելու անհրաժեշտ նախապայման է բակալավրի աստիճանի առկայությունը:
- Շարունակական և ինտեգրված ծրագրեր բժշկական մասնագիտությունների համար-բժշկական մասնագիտությունների համար իրականացվում են շարունակական և ինտեգրված կրթական ծրագրեր. «Ստոմատոլոգիայի» ուղղությամբ որակավորման համար սահմանված է 300 կրեդիտ՝ 5 տարվա ուսուցմամբ, «Բժիշկ (M. D. Physician)» որակավորման համար սահմանված է 360 կրեդիտ՝ 6 տարվա ուսուցմամբ: Ծրագրերին ընդունվելու անհրաժեշտ նախապայման է լիարժեք միջնակարգ կրթության վկայականը կամ միջին մասնագիտական կրթության դիպլոմը: Բարձրագույն բժշկական կրթությունից հետո ուսանողներին առաջարկվում է կլինիկական ռեզիդենտուրայի ծրագիր (residency)

medical training), որի տևողությունը կախված է մասնագիտությունից և կազմում է 1–4 տարի:

- Դոկտորական կրթական ծրագրեր- Բարձրագույն կրթության երրորդ մակարդակի՝ դոկտորական ծրագրերի նպատակն ուսանողներին խորացված տեսական և գործնական գիտելիքներով ապահովելն է՝ հետագա անկախ հետազոտություններ և մասնագիտական ստեղծագործական գործունեություն իրականացնելու համար: Դոկտորական ծրագրերին ընդունվելու անհրաժեշտ նախապայման է մագիստրոսի աստիճանը կամ համարժեք որակավորումը, ինչպես նաև «Բժիշկ (M. D. Physician)» որակավորումը՝ կլինիկական ուղղվածությամբ բժշկական մասնագիտությունների համար: Դոկտորական ծրագրերի համար սահմանված է 180 կրեդիտ՝ առնվազն 3 տարվա լիաժամ ուսուցմամբ: Ծրագրի հաջող ավարտից և ատենախոսության պաշտպանությունից հետո շնորհվում է գիտական աստիճան (Doctor of Philosophy): Գիտությունների դոկտորն առաջադեմ գիտական աստիճան է, որը շնորհվում է արդեն դոկտորական աստիճան ունեցող անձին (Doctor of Philosophy)՝ որպես իր գիտական նվաճումների և ձեռքբերումների ճանաչում:

IV. Ընդհանուր տեղեկատվություն համալսարանի վերաբերյալ

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանը (ՀՊՏՀ) շահույթ չհետապնդող, իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող ոչ առևտրային կազմակերպություն է: Համալսարանի կառավարման համակարգը կառուցված է այնպիսի սկզբունքների վրա, որոնք նպաստում են իր առաքելության և նպատակների իրականացմանը՝ ապահովելով կառավարման էթիկայի նորմերի պահպանումը: Համալսարանի կառավարման համակարգը գործում է «Կրթության մասին», «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» և «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքների, ինչպես նաև ՀՊՏՀ կանոնադրության և մասնաճյուղերի կանոնադրությունների հիման վրա: Կառավարման արդյունավետությունը հիմնված է կոլեգիալության սկզբունքի վրա, որը գործարկվում է համալսարանի խորհրդի, գիտական խորհրդի և ռեկտորի գործառույթներով: Կառավարման համակարգի արդյունավետությունը գնահատվում է ուսանողների, դասախոսների և գործընկերների հետ իրականացվող հարցումների, ինչպես նաև ռազմավարական նպատակների կատարողականի գնահատման միջոցով: Դասախոսները և ուսանողները ներկայացված են Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի խորհրդում՝ յուրաքանչյուրը 25% քվեի իրավունքով: Ուսանողները նույն ծավալի ներկայացվածություն ունեն նաև Գիտական խորհրդում: Ինքնավերլուծությունում նշվում է, որ ՀՊՏՀ-ն պարբերաբար հրապարակում է իր գործունեության հաշվետվությունները և որոշումների կայացման գործընթացում ապահովում շահակիցների (ուսանողներ, դասախոսներ, գործընկերներ) ներգրավվածությունը: Համալսարանում գործող կառավարման մեխանիզմները (հանձնաժողովներ, նիստեր, քննարկումներ, լսումներ) նպաստում են մասնակցային որոշումների կայացմանը: Բացի այդ, համալսարանում գործում է

վարքականոն, որն ամրագրում է թափանցիկության, արդարության և հաշվետվողականության սկզբունքները:

Համաձայն ինքնավերլուծության՝ ՀՊՏՀ-ի բյուջեն կայուն է: 2020-2024 թթ. ընթացքում համալսարանի եկամուտներն աճել են 40%-ով, ինչը պայմանավորված է կրթական ծառայությունների կայուն պահանջարկով և բակալավրի ու մագիստրոսի կրթական ծրագրերում ուսանողների թվի ավելացմամբ: Նույն ժամանակահատվածում ծախսերն աճել են 75%-ով: Վճարովի կրթական ծառայություններից ստացվող եկամուտներն ավելացել են 57%-ով, իսկ աշխատակազմի հետ կապված ծախսերը՝ 70%-ով: Այս աճը հնարավորություն է տվել համալսարանին ոչ միայն պահպանել ֆինանսական կայունությունը, այլև իրականացնել ենթակառուցվածքային բարելավումներ: 2019 թ.-ի համեմատ՝ ուսանողների ընդհանուր թվաքանակը 2023 թ.-ին աճել է 11%-ով՝ կազմելով շուրջ 8000 ուսանող (7200-ի փոխարեն):

ՀՊՏՀ առաքելությամբ սահմանված հիմնական նպատակներն ու խնդիրները կյանքի են կոչվում տարբեր ուղղություններով և ձևաչափերով իրականացվող գործողությունների միջոցով: ՀՊՏՀ-ում երկարաժամկետ, միջնաժամկետ և կարճաժամկետ պլանավորումն ընդգրկում է ընդհանուր ռազմավարական պլանավորման, ֆինանսական պլանավորման, կրթական և ակադեմիական գործունեության պլանավորման, ինչպես նաև գիտական գործունեության պլանավորման հիմնական ոլորտները: Կրթական ծրագրերի ուսումնական պլանների հիման վրա ամբիոնները տարեկան պլանավորում են առարկաների դասավանդման բաշխվածությունը, դասախոսական կազմի հաստիքները և ակադեմիական ծանրաբեռնվածությունը: Ինքնավերլուծության համաձայն՝ ՀՊՏՀ-ն ռազմավարական պլանավորման գործընթացում կիրառում է ներքին և արտաքին միջավայրի բազմակողմանի վերլուծություն՝ վերլուծելով տարբեր գործոններ և օգտագործելով մի շարք մեթոդներ:

Համաձայն ինքնավերլուծության՝ ՀՊՏՀ-ն որդեգրել է Բաց գիտության ռազմավարություն, որի նպատակն է խթանել գիտական հետազոտությունների թափանցիկությունն ու հասանելիությունը: Այն ներառում է բաց հետազոտական տվյալների հրապարակում և տեղական ու միջազգային գիտական կազմակերպությունների հետ համագործակցություն՝ հետազոտական արդյունքների տարածման և կիրառման ուղղությամբ: Բացի այդ, ՀՊՏՀ-ն մշակում և իրականացնում է նաև միջազգայնացման ռազմավարություն, որի նպատակը համալսարանի միջազգային հեղինակության բարձրացումն է: Միջազգայնացման քաղաքականության շրջանակում իրականացվում են ակադեմիական շարժունության ծրագրերի ընդլայնում, արտասահմանյան գործընկեր համալսարանների հետ համագործակցության խորացում և համատեղ կրթական ծրագրերի իրականացում:

ՀՊՏՀ-ն ունի երկու մասնաճյուղ՝ Գյումրիում և Եղեգնաձորում: Վերջինիս վերաբերյալ Գիտական խորհուրդը 2022-2023 ուսումնական տարում որոշում է կայացրել դադարեցնել ուսանողների ընդունելությունը. այնուամենայնիվ, մասնաճյուղը կշարունակի գործել մինչև 2022թ.-ից առաջ ընդունված ուսանողների ուսումնառության ավարտը: Բացի դրանից, ՀՊՏՀ-ի կազմում է գործում նաև Երևանի ֆինանսաբանկային քոլեջը, որը 2015 թվականին միացվել է համալսարանին:

V. Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի գնահատում

1. ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐ

Հաստատությունն ունի որակի ապահովման քաղաքականություն, որը հասանելի է հանրությանը (և նրանց ռազմավարական կառավարման մաս է կազմում): Ներքին շահակիցները պետք է մշակեն և իրականացնեն այս քաղաքականությունը համապատասխան կառույցների և գործընթացների միջոցով՝ միաժամանակ ներգրավելով արտաքին շահակիցներին: [ESG, 1.1]

Ըստ ինքնավերլուծության՝ ՀՊՏՀ-ի որակի ապահովման համակարգի հիմքը ձևավորվում է համալսարանի Կանոնադրությամբ, ՀՊՏՀ 2023-2027 թվականների զարգացման ռազմավարությամբ և որակի ապահովման ձեռնարկով (2023 թ.): ՈԱ շրջանակի գործառնական մեխանիզմները սահմանված են նաև համալսարանի կառավարման մարմինների կողմից հաստատված մի շարք իրավական և կարգավորիչ փաստաթղթերով:

ՀՊՏՀ-ի որակի ապահովման ձեռնարկը ՈԱ ներքին համակարգի և ՊԻԳԲ ցիկլի հիմնական հիմքն է: Ինքնավերլուծությունում նշվում է, որ համալսարանի ՈԱ քաղաքականություններն ու ընթացակարգերը համահունչ են ինչպես Որակավորումների ազգային և եվրոպական շրջանակներին, այնպես էլ համալսարանի կանոնադրական և ռազմավարական նպատակներին, առաքելությանը և տեսլականին:

Համաձայն ինքնավերլուծության՝ ՀՊՏՀ-ի որակի ապահովման քաղաքականության գործառնական մոդելը հիմնված է երկու հիմնական մոտեցումների վրա.

1. Որակի ապահովման համար անհրաժեշտ իրավական և կարգավորիչ դաշտի ձևավորում և դրա հասանելիության ապահովում բոլոր շահակիցների համար: Այս նպատակով ՀՊՏՀ-ն որդեգրել է քաղաքականություն՝ տարբեր փաստաթղթերում (այդ թվում՝ աշխատանքային պարտականությունների նկարագրերում) ներառելու ՈԱ պահանջներն ու նպատակները, ինչպես նաև համալսարանի ներքին շահակիցների իրազեկվածության բարձրացման ուղղությամբ:
2. ՈԱ քաղաքականությամբ սահմանված իրավական և կարգավորիչ դաշտի փոխակերպում գործնական քայլերի և գործիքների՝ ներքին շահակիցների ակտիվ ներգրավմամբ: Այս համատեքստում ՀՊՏՀ-ն նախատեսում և ուղղորդում է ՈԱ քաղաքականությունից բխող գործընթացներն ու գործունեությունները՝ միաժամանակ նպաստելով համալսարանում որակի մշակույթի ձևավորմանը:

ՀՊՏՀ-ում ՊԻԳԲ ցիկլի շրջանակում իրականացվում են պարբերական ինքնավերլուծական գնահատումներ, որոնք ուղղված են խնդիրների հայտնաբերման և գործընթացների արդյունավետության բարելավմանը տարբեր մակարդակներում: Գործընթացը շարունակական է, կրկնվող և ստուգվում է ստացված քանակական և որակական արդյունքների հիման վրա: ՀՊՏՀ-ում իրականացվում են ՈԱ վերանայման երկու ցիկլեր՝ հարաբերական տարեկան ցիկլ և 5-

ամյա ռազմավարական պլանավորման ցիկլ: ՈԱ քաղաքականությունների և ընթացակարգերի մշակման ու իրականացման պատասխանատուներն են ՀՊՏՀ-ի Կառավարման խորհուրդը, Գիտական խորհուրդը, ռեկտորը, պրոռեկտորները, բաժնի ղեկավարները, ՈԱ բաժինը, Ուսումնական բաժինը, ֆակուլտետային խորհրդները, ամբիոնները/կրթական ծրագրերի համակարգողներն ու ներքին շահագրգիռ կողմերը: Նրանց գործառնություններն ամրագրված են Որակի ապահովման ձեռնարկում:

2023-2027 թթ. ՌԾ-ում ներառված են որակի ապահովման, բարելավման և վերահսկողության հետ կապված նպատակներ ու ենթանպատակներ: Գործողությունների ծրագրում մատնանշված են այդ խնդրի իրագործման համար անհրաժեշտ միջոցառումները: Գործողությունների ծրագրում նշված միջոցառումները ներառված են պատասխանատու ամբիոնների տարեկան աշխատանքային ծրագրերում, և դրանց իրականացման արդյունքները տարեկան հաշվետվողականության գործընթացի մաս են կազմում, որը երկաստիճան է. նախ, ամբիոնների տարեկան գործունեության հաշվետվությունները ներկայացվում են գիտական խորհրդում, և դրանց հաստատումից հետո դրանք համակարգված կերպով ներառվում են համալսարանի տարեկան գործունեության հաշվետվության մեջ, որը ներկայացվում է Կառավարման խորհրդին վերջնական հաստատման համար: ՀՊՏՀ-ում կիրառվող ՈԱ գործիքները սերտորեն կապված են ռազմավարական նպատակների իրականացման հետ, ինտեգրված են համալսարանի տարբեր գործընթացների պլանավորման և կառավարման մեջ, ինչպես նաև նպաստում են շահակիցների հետ արդյունավետ հաղորդակցությանը և կարիքների պարզաբանմանը՝ հետադարձ կապի մեխանիզմների միջոցով: Կրթական ծրագրերի որակի մշտադիտարկման տեսանկյունից՝ ՀՊՏՀ-ում գործում է «Ուսումնական ծրագրերի մշակման, գնահատման և շարունակական վերահսկողությունյան կանոնակարգը», որը ներառում է ուղեցույցներ՝ ծրագրի կառուցվածքի պահանջների, ուսումնառության արդյունքների սահմանման, գնահատման և վերանայման չափանիշների, համեմատական չափանիշների, ռեսուրսների գնահատման, կրթական ծրագրերի կարիքների վերլուծության և աշխատաշուկայի վերլուծության համար անհրաժեշտ չափանիշների վերաբերյալ: Արտաքին և ներքին շահակիցների կողմերից (ուսանողներ, աշխատակիցներ, գործատուներ, շրջանավարտներ) ստացված հետադարձ կապը հիմնականում հավաքագրվում է հարցումների միջոցով: ՀՊՏՀ-ն պահպանում է թվայնացված տվյալների բազաներ, որոնք վերաբերում են նշված խմբերին: Մշտադիտարկումը, հարցումները, խորացված հետազոտությունները և տվյալների հավաքագրումն իրականացվում են համակարգված և կանոնակարգված գործընթացով: Ստացված տվյալներն ու վերլուծություններն օգտագործվում են ՀՊՏՀ-ում որոշումների կայացման գործընթացում:

Համաձայն ինքնավերլուծության՝ շահակիցների հետադարձ կապի վերլուծության համար ՀՊՏՀ-ն հիմնականում կիրառում է SWOT (ուժեղ կողմեր, թույլ կողմեր, հնարավորություններ, վտանգներ) վերլուծության մեթոդը, իսկ ընտրված գործոնների ազդեցության չափը հասկանալու համար կիրառվում է PEST վերլուծության գործիքը:

Շահակիցների նկատմամբ հարգանքի ապահովման և փոփոխությունների իրականացման ընթացքում փոխադարձ հարգանքն ու հանդուրժողականությունը պահպանելու նպատակով՝ ՀՊՏՀ-ի Գիտական խորհուրդն ընդունել է համալսարանի աշխատակիցների էթիկայի և

վարքականոնի կանոնակարգը և ՀՊՏՀ-ի ներքին կարգապահական կանոնները: Արձանագրված փաստաթղթերը նպատակ ունեն ապահովելու ակադեմիական ազնվությունը և ստեղծելու միջավայր, որը իրանում է համալսարանի ռազմավարական զարգացման պլանում և կանոնադրության մեջ արտացոլված արժեքների պահպանումը:

Համաձայն ինքնավերլուծության՝ ՈԱ ոլորտում իրականացված գործողությունները տարեկան ամփոփվում են Որակի ապահովման բաժնի հաշվետվությունում, որը ներառվում է նաև ռեկտորի տարեկան հաշվետվությունում: Հաշվետվությունները հասանելի են ինչպես ներքին, այնպես էլ արտաքին շահակիցների համար:

ՀՊՏՀ-ի առաքելությունն ամրագրված է համալսարանի զարգացման ռազմավարություններում և քաղաքականություններում, որոնք ուղղված են համալսարանի կանոնադրական նպատակների և խնդիրների իրականացմանը: ՀՊՏՀ-ի Որակի ապահովման բաժինը, արտաքին կապերի բաժինը և համապատասխան ամբիոնները պլանավորում են միջազգային հավատարմագրուժները: Որակի ապահովման բաժինը, կարիերայի կենտրոնը և SS բաժինն իրականացնում են ներքին և արտաքին շահակիցների տարեկան հարցումներ, վերլուծում և հրապարակում դրանց արդյունքները: Շարունակական կրթության բաժինը համակարգում է դասախոսական կազմի մասնագիտական զարգացման գործընթացը՝ համագործակցելով ամբիոնների հետ: «Ամբերդ» հետազոտական կենտրոնը ճշգրտում է իր տարեկան հետազոտական ծրագիրը՝ հիմնվելով շահակիցներից ստացված թեմատիկ հարցումների վրա:

Փորձագիտական գնահատում

ՀՊՏՀ-ում գործում է որակի ապահովման կայուն շրջանակ, որը ձևավորվել է համալսարանի կանոնադրությամբ, «ՀՊՏՀ 2023-2027թթ. զարգացման ռազմավարությամբ և գործողությունների ծրագրով», ինչպես նաև «ՀՊՏՀ Որակի ապահովման ձեռնարկով» (2023թ.): ՈԱ-ի ներքին քաղաքականությունների մասը կազմում են Որակի ապահովման քաղաքականությունը, Որակի ապահովման համակարգի վերանայման քաղաքականությունը, ինչպես նաև էթիկայի և ակադեմիական ազնվության կանոնակարգերը: Որակի պահպանման մեխանիզմները (գործընթացներ, գործիքներ և պատասխանատվությունների բաշխում) հստակ սահմանված են ՈԱ ձեռնարկում, ինչպես նաև գործընթացները նկարագրող մի շարք կանոնակարգերում, ինչպես օրինակ՝ փոփոխությունների արդյունավետության գնահատման, կրթական ծրագրերի մշակման, հաստատման և իրականացման, հարցումների իրականացման կարգերի վերաբերյալ: Նշված փաստաթղթերը ներկայացնում են ՀՊՏՀ որակի ապահովման կառուցվածքի ամբողջական պատկերը: Դրանք հասանելի են թե՛ ներքին, թե՛ արտաքին շահակիցներին, ինչը հաստատում է համալսարանի՝ թափանցիկության սկզբունքին հավատարիմ լինելու հանձնառությունը: Մակայն, որակի ապահովման ձեռնարկում ներառված քաղաքականությունների ինտեգրվածությունը, ինչպես նաև համապարփակ և մանրամասն կարգավորումների մեծ թիվը, կարող են դժվարացնել պատասխանատվությունների, ընթացակարգերի և դրանց փոխկապվածության արագ ընկալումը: Նպատակահարմար է համալսարանի հիմնական որակի ապահովման գործընթացները ներկայացնել տեսապատկերային ձևաչափով, որ շահակիցները հեշտությամբ ընկալեն

պատասխանատվությունների բաշխումը, աշխատանքային հոսքերը և դրանց փոխկապվածությունը (Խորհրդատվություն 1):

ՈԱ համակարգում պատասխանատվությունները բաշխված են և կիսվում են համալսարանի կառավարման և գործառնական մարմինների միջև՝ համալսարանական, ֆակուլտետային և ամբիոնային մակարդակներում: Սա ապահովում է համակարգի ամբողջականությունն ու հստակությունը բոլոր ինստիտուցիոնալ մակարդակներում, ինչպես նաև նպաստում է որակի մշակույթի ձևավորմանը և պահպանմանը: Որակի մշակույթի զարգացման նպատակով ներգրավվում են ինչպես ներքին շահակիցները՝ ֆակուլտետների դասախոսական և վարչական կազմը, ուսանողները, այնպես էլ արտաքին շահակիցները՝ գործատուներ, շրջանավարտներ և գործընկերներ: Նրանց մասնակցությունը ծրագրերի նախագծման, մշակման և իրականացման, ինչպես նաև ՈԱ գործընթացներում ապահովում է համատեղ պատասխանատվության սկզբունքի կիրարկում կրթության և ուսուցման որակի համար: Այս համագործակցային մոտեցումը հնարավորություն է տալիս ստանալ շահակիցներից անմիջական կարծիքներ ՈԱ գործընթացների արդյունավետության վերաբերյալ: Փորձագիտական այցի ընթացքում բոլոր շահակիցները դրական են գնահատել իրենց ներգրավվածության մակարդակը, համալսարանի արձագանքներն իրենց առաջարկներին և համագործակցության որակը:

Տվյալահենք որոշումների կայացումը ՀՊՏՀ-ում կիրառվում է ինչպես ռազմավարական պլանավորման, այնպես էլ որակի ապահովման գործընթացներում՝ օգտագործելով թե՛ քանակական, թե՛ որակական տվյալներ: Համալսարանն այս նպատակով համակարգված կերպով հավաքում, վերլուծում և կիրառում է տվյալներ տարբեր աղբյուրներից և ինստիտուցիոնալ մակարդակներից: Դրանք ներառում են ուսանողների առաջընթացի ցուցանիշները, հաջողության և դուրս Բնալու մակարդակները, շրջանավարտների զբաղվածության տվյալները, շահակիցների՝ ուսանողների, շրջանավարտների, աշխատողների և գործատուների կարծիքները (ծրագրային և համալսարանական մակարդակներում իրականացվող հարցումների միջոցով), փորձագիտական խմբերի քննարկումների արդյունքները: Հավաքագրված արձագանքներն ընդգրկում են ոչ միայն ծրագրերի և դասավանդման որակի, այլև ուսուցմանության միջավայրերի, աջակցող ծառայությունների և շրջանավարտների՝ աշխատաշուկայում մրցունակության վերաբերյալ գնահատականներ:

Համալսարանի որակի ապահովման գործընթացները կառուցված են «Պլանավորել-Իրականացնել-Գնահատել-Բարելավել» (ՊԻԳԲ) շրջափուլի տրամաբանությամբ: Կատարվում են պարբերական ինքնագնահատումներ, վերանայման գործընթացներ և շահակիցների արձագանքների հավաքագրում, որոնք հանգեցնում են կոնկրետ քայլերի՝ գործընթացներն ու արդյունքները բարելավելու նպատակով: Այսպիսով ապահովվում է հետադարձ կապի ամբողջական շրջափուլի գործարկումը:

Որպես օրինակ կարելի է նշել.

- տնտեսագիտական կլաստերի հավատարմագրման ընթացքում իրականացված ծրագրային բարեփոխումները,
- պրակտիկայի քաղաքականության մշակումը՝ ուսանողական արձագանքի հիման վրա,

- ինչպես նաև առանձին դասընթացներում ուսանողների ծանրաբեռնվածության կարգավորումը, որը նույնպես հիմնված է ուսանողների տրամադրած տվյալների վրա:

Այս մոտեցումը փաստում է, որ համալսարանը հետևողականորեն կիրառում է որակի ապահովման մեխանիզմներ՝ ապահովելով հետադարձ կապի գործնական և արդյունավետ կիրառություն:

Եզրակացություն

Չափանիշը գնահատվում է բավարար:

2.ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հաստատության կառավարման համակարգը, վարչական կառուցվածքը և դրանց գործելակերպն արդյունավետ են և նպատակաուղղված են իր առաքելության և նպատակների իրականացմանը՝ պահպանելով կառավարման էթիկայի կանոնները:

Ըստ ինքնավերլուծության՝ ՀՊՏՀ կառավարման համակարգը ձևավորված է հաստատության առաքելության և ռազմավարական նպատակների արդյունավետ իրականացմանը նպաստելու համար՝ պահպանելով թափանցիկության, արդարության և հաշվետվողականության սկզբունքները, որոնք ամրագրված են էթիկայի կանոնագրքում: Կառավարման համակարգը գործում է ազգային օրենսդրությանը և համալսարանի Կանոնադրությանը համահունչ, իսկ դրա արդյունավետությունը պարբերաբար գնահատվում է շահակիցների հարցումների և կատարողականի վերլուծության միջոցով: ՀՊՏՀ-ն առաջնորդվում է կոլեգիալության սկզբունքով, որը հիմնականում դրսևորվում է Համալսարանի Խորհրդի, Գիտական խորհրդի և Ռեկտորի գործունեությամբ: Որոշումների կայացման կառույցներում ուսանողներն ու պրոֆեսորադասախոսական կազմը ներգրավված են պաշտոնապես՝ կազմելով համապատասխանաբար 25% ներկայացվածություն ինչպես Համալսարանի խորհրդում, այնպես էլ Գիտական խորհրդում: Ինչպես շեշտվում է ԻՎ-ում, լուսամտերի, նիստերի և հանձնաժողովների մեխանիզմներն ապահովում են, որ որոշումների կայացման գործընթացները լինեն ոչ միայն կանոնակարգված և ներառական, այլև համահունչ էթիկական չափանիշներին: Բացի այդ, համալսարանի Վարքականոնն ու Ներքին կարգապահական կանոնակարգը նպատակ ունեն ձևավորելու փոխադարձ հարգանքի, ակադեմիական ազնվության և հաշվետվողականության վրա հիմնված միջավայր:

Համաձայն ինքնավերլուծության՝ ՀՊՏՀ կառավարման մոդելն ապահովում է մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսների արդյունավետ կառավարում: 2020-2024 թվականների ընթացքում համալսարանն արձանագրել է եկամուտների 40% աճ և ծախսերի 75% բարձրացում, ինչը հնարավորություն է տվել իրականացնել ենթակառուցվածքային բարելավումներ և անձնակազմի զարգացման ծրագրեր: Ֆինանսական պլանավորումը համահունչ է հաստատության լայնածավալ զարգացման ռազմավարությանը, որն ընդգրկում է կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ նպատակներ: Վերջիններս գործնականում իրականանում են

տարեկան և ռազմավարական ծրագրային փաստաթղթերով, որոնց իրականացումը վերահսկվում է համալսարանի ՈԱ Բաժնի կողմից և գնահատվում է երկաստիճան հաշվետվողականության գործընթացի միջոցով. նախ բաժինների հաշվետվություններով, ապա դրանց ներառմամբ ռեկտորի տարեկան զեկույցում: Ըստ ԻՎ-ի՝ որոշումների կայացման գործընթացները հիմնվում են միջավայրի համակարգված մշտադիտարկման և ներքին ու արտաքին տվյալների կիրառման վրա, ներառյալ հարցումներ, աշխատաշուկայի վերլուծություններ, համեմատական ուսումնասիրություններ և ազգային վիճակագրական տվյալներ: Որակի ապահովման գործիքների կիրառումը, մասնավորապես՝ ՊԻԳԲ ցիկլը, դիտարկվում է որպես ակադեմիական և վարչական գործընթացների կառավարման առանցքային մեխանիզմ: Այս ցիկլային մոդելը կիրառվում է ոչ միայն կրթական ծրագրերի և քաղաքականությունների մշակման, այլև հաստատության գործունեության ավելի լայն ոլորտներում՝ ապահովելով շարունակական բարելավում և համահունչ լինելով բարձրագույն կրթության կառավարման ազգային և եվրոպական չափանիշներին:

Փորձագիտական գնահատում

ՀՊՏՀ կառավարման համակարգը, վարչական կառույցներն ու դրանց գործելակերպը նպատակաուղղված են համալսարանի առաքելության և նպատակների իրականացմանը՝ պահպանելով կառավարման էթիկայի կանոնակարգը: Այնուամենայնիվ, արդյունավետության բարձրացման նպատակով անհրաժեշտ է վերանայել Որակի ապահովման բաժնի պատասխանատվությունների շրջանակը: Առաջարկվում է Որակի ապահովման բաժնի ներսում պատասխանատվությունների տարանջատում՝ ռազմավարական պլանի նպատակների իրականացման գնահատումը հիմնական ցուցանիշների միջոցով ապահովելու և համալսարանի ինստիտուցիոնալ կարողությունների գնահատման ու վերլուծության գործընթացների համակարգման համար՝ ստեղծելով զարգացման ռազմավարության իրագործման մոնիթորինգի համար պատասխանատու առանձին ստորաբաժանում (Խորհրդատվություն 2):

Այս նպատակով, ինչպես նաև առաջարկվում է երկարաժամկետ, միջնաժամկետ և կարճաժամկետ պլանավորումը տարանջատել՝ յուրաքանչյուրի համար հստակ հիմնական ցուցանիշներով (KPI), որպեսզի ավելի հստակ դառնան համալսարանի տեսլականի, առաքելության և ռազմավարական նպատակների իրագործման համար անհրաժեշտ գործողությունները (Խորհրդատվություն 3):

ՀՊՏՀ կառավարման համակարգն ապահովում է կանոնակարգված որոշումների կայացման գործընթաց՝ համաձայն սահմանված վարքագծի կանոնակարգի և ապահովելով անհրաժեշտ մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսները՝ համալսարանի կրթական և այլ նպատակների իրականացման համար: Կառավարման մարմինների կազմում ներառված է նաև Էթիկայի խորհուրդը, որի կազմում ընդգրկված են թե՛ ակադեմիական անձնակազմի, թե՛ ուսանողների ներկայացուցիչներ:

ՀՊՏՀ կառավարման համակարգն ուսանողներին և դասախոսներին հնարավորություն է տալիս մասնակցելու որոշում կայացման գործընթացին: Ուսանողները և դասախոսները պաշտոնապես ներգրավված են կառավարման մարմիններում: Աշխատակիցների և ուսանողների իրավունքները՝ մասնակցելու համալսարանի համապատասխան կառավարման մարմինների աշխատանքներին,

ամրագրված են ՀՊՏՀ կանոնադրությամբ: Համալսարանի կոլեգիալ կառավարման մարմինը Կառավարման խորհուրդն է, որը բաղկացած է ակադեմիական անձնակազմի, ուսանողների, հիմնադրի և լիազոր պետական մարմինների ներկայացուցիչներից: Ուսանողները, այդ թվում՝ Ուսանողական խորհրդի նախագահը, և ակադեմիական անձնակազմը, ունեն 25% ներկայացվածություն համալսարանի Գիտական խորհրդում (ՀՊՏՀ կանոնադրություն): Ակադեմիական անձնակազմը ներառված է նաև Համալսարանի խորհրդի կազմում: Գիտական խորհրդի կազմը հաստատում է ռեկտորը (ՀՊՏՀ կանոնադրություն, էջ 4-5): Ֆակուլտետի կառավարման մարմինը ֆակուլտետի խորհուրդն է, որը ձևավորվում է ամբիոնների վարիչներից (2-3 անդամ) և ուսանողական խորհրդի կողմից ընտրված ուսանողներից՝ կազմված 25% ներկայացվածությամբ: Ամբիոնը ֆակուլտետի կառուցվածքային ստորաբաժանում է, որը պատասխանատու է ուսումնական գործընթացի կազմակերպման համար՝ գործելով ՀՊՏՀ կանոնադրության և ֆակուլտետի կանոնակարգերի հիման վրա: Ամբիոնում ընդգրկված է ակադեմիական անձնակազմը: Անձնակազմի և ուսանողների հետ հանդիպումների ընթացքում փորձագետները հաստատեցին նրանց ներգրավվածությունը կառավարման մարմիններում և ընդհանուր գոհունակությունը՝ ընտրության, նշանակման և մասնակցության գործընթացներից: Հաստատությունը մշակում և իրականացնում է իր առաքելությանը և նպատակներին համահունչ երկարաժամկետ պլանավորում՝ հստակ մոնիթորինգի և իրականացման մեխանիզմներով: ՀՊՏՀ-ի 2018–2022 թթ. զարգացման ռազմավարությունը և գործողությունների պլանը ներառում են տեսլականը, առաքելությունը, արժեքները և ռազմավարական նպատակները: Գործում է նաև ՀՊՏՀ-ի 2023–2027 թթ. զարգացման ռազմավարությունը: Պատրաստվում են տարեկան հաշվետվություններ, օրինակ՝ ՀՊՏՀ 2023 թ. տարեկան հաշվետվությունը: Նման հաշվետվությունների արդյունավետությունը բարձրացնելու համար անհրաժեշտ է մշակել միջնաժամկետ և տարեկան նպատակների իրականացման վերլուծություն՝ հիմնված SMART սկզբունքների վրա, որպեսզի հնարավոր լինի գնահատել դրանց իրականացման մակարդակը (Խորհրդատվություն 4): Տարեկան հաշվետվությունը կարող է լինել ավելի վերլուծական՝ ընդգրկելով պլանավորված արդյունքների վերաբերյալ քննադատական անդրադարձ և դրանց իրականացման մակարդակի գնահատում: Օրինակ՝ ՀՊՏՀ 2023 թ. տարեկան հաշվետվության մեջ նշվում է, որ ակադեմիական անձնակազմը հրատարակել է 33 մենագրություն, 18 դասագիրք, 9 թեզիս և 368 հոդված (ՀՊՏՀ 2023 տարեկան հաշվետվություն, էջ 13): Սակայն հաշվետվությունը կարող էր ներառել եզրակացություն՝ արդյոք դա լավ արդյունք է, թե ոչ: Նույնը վերաբերում է այլ դեպքերին:

ՀՊՏՀ-ն իրականացնում է միջավայրի վերլուծություն՝ օրինակ՝ SWOT վերլուծություն և PESTEL վերլուծություն՝ հիմնված իր պրոֆիլին առնչվող առաջնային և երկրորդային տվյալների հավաքագրման վրա, որոնց աղբյուրներն են ազգային և միջազգային հրապարակումները:

ՀՊՏՀ կառավարման քաղաքականությունները և գործընթացները հիմնված են ՊԻԳԲ մոդելի վրա, որը ներկայացված է ՀՊՏՀ Որակի ապահովման ձեռնարկում (էջ 20):

Եզրակացություն

Զափանիշը գնահատվում է բավարար:

3. ԾՐԱԳՐԵՐԻ ՄՇԱԿՈՒՄ, ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՎ ԴԱԴԱՐԵՑՈՒՄ

Հաստատությունն ունի իր ծրագրերի մշակման, հաստատման և դադարեցման գործընթացներ: Հաստատությունն ապահովում է շահակիցների ներգրավվածությունը այս գործընթացներում: Ծրագրերը նախատեսված են իրենց առջև դրված նպատակներին հասնելու համար՝ ներառյալ նախատեսված ուսումնասության արդյունքները: Ծրագրի արդյունքում ստացվող որակավորումը հստակ ամրագրված և նշված է, համապատասխանում է Եվրոպական բարձրագույն կրթության տարածքի որակավորումների շրջանակի մակարդակին և, հետևաբար, համապատասխանեցման դեպքում՝ բարձրագույն կրթության որակավորումների ազգային շրջանակին: [ESG, 1.2]

ՀՊՏՀ-ն նոր կրթական ծրագրեր մշակելիս առաջնորդվում է մի շարք արտաքին և ներքին կարգավորող փաստաթղթերով: Դրանց թվում են՝ ՀՀ որակավորումների ազգային շրջանակը (ՈԱՇ) և ՀՊՏՀ-ի «Մասնագիտական կրթական ծրագրերի նախագծման, շարունակական մոնիթորինգի և գնահատման կանոնակարգը»: Բուհի ամբիոններն ազատ են իրենց մասնագիտական ուղղությունների շրջանակում կամ այլ ամբիոնների հետ համագործակցությամբ մշակելու կրթական ծրագրեր, այդ թվում՝ միջառարկայական շեշտադրմամբ: Կրթական ծրագրերի մշակման գործընթացը ներառում է մի շարք փուլեր, որոնք համապատասխանում են սահմանված կարգավորումներին: Այդ փուլերը ներառում են՝

- ոլորտը կարգավորող օրենսդրության և իրավական ակտերի ուսումնասիրություն,
- լիցենզավորման պահանջների կատարում,
- ընդհանուր և բարձրագույն կրթության չափորոշիչներում ամրագրված համապատասխան մակարդակի կարողությունների ապահովում,
- կրթական ծրագրերի հավատարմագրման չափանիշների պահպանում:

Նախագծման գործընթացի շրջանակում իրականացվում են անհրաժեշտ վերլուծություններ, կազմվում է կրթական ծրագրի ամբողջական փաթեթ, որը ներկայացվում է շահակիցների քննարկմանը, իսկ վերջնական տարբերակն ուղարկվում է մասնագիտական փորձաքննության: Բոլոր նոր մշակվող կրթական ծրագրերը պետք է համահունչ լինեն ՀՊՏՀ-ի 2023-2027 թթ. զարգացման ռազմավարությանը: ՀՊՏՀ-ն իրականացնում է կրթական ծրագրեր ՈԱՇ-ի 4-րդ, 5-րդ, 6-րդ, 7-րդ և 8-րդ մակարդակներում՝ նպատակ ունենալով զարգացնել մասնագիտական կարողություններ տնտեսագիտության, բիզնեսի կառավարման, սոցիալական և վարքաբանական գիտությունների և հարակից այլ ոլորտներում:

ՀՊՏՀ կրթական ծրագրերի մշակման ընթացակարգում սահմանված են շարունակական մոնիթորինգի համար պատասխանատու մարմինների, բոլոր մյուս ներգրավված շահակիցների, ինչպես նաև վերջնական հաստատող մարմնի (ՀՊՏՀ գիտական խորհուրդ) գործառույթներն ու պարտականությունները: Շարունակական մշտադիտարկման գործունեությունը կազմակերպվում և համակարգվում է Ուսումնական բաժնի կողմից՝ Ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորի ղեկավարությամբ: Կրթական ծրագրերի նախնական աուդիտը, փորձագիտական գնահատումը և արդյունքների վերլուծությունը կազմակերպվում և

համակարգվում է Որակի ապահովման բաժնի կողմից: Վերջինս նաև ապահովում է նոր կրթական ծրագրերի նախագծման ընթացակարգի մեկնաբանությունը և պարբերական հանդիպումներ է իրականացնում ծրագրեր մշակուժն իրականացնող աշխատանքային խմբերի հետ՝ ընթացիկ խնդիրները պարզաբանելու և անհրաժեշտ աջակցություն ցուցաբերելու նպատակով:

2014 թվականից սկսած՝ ՀՊՏՀ-ում մշակվող բոլոր նոր ծրագրերը հիմնվում են վերջնարդյունահանք մոտեցման վրա, որի համաձայն կրթական ծրագրերը ձևավորվում են նախատեսված ուսումնառության արդյունքների (ՈւԱ) հիման վրա: ՈւԱ-ները համահունչ են ՈԵՇ-ի և ՈԱՇ-ի նկարագրիչներին և ներառում են գիտելիքներ, հմտություններ և կարողություններ: Որպես միջոցառումներ ուսումնառության արդյունքներ դիտարկվում են նաև մաթեմատիկական մոդելավորումը, տեղեկատվական տեխնոլոգիաները և իրավագիտությունը, որոնք նպաստում են տնտեսագիտական գիտելիքների գործնական կիրառմանը:

ՈւԱ-ների ձեռքբերման համար անհրաժեշտ ժամային բեռնվածությունը նույնպես դիտարկվում է նոր ծրագրեր նախագծելիս: Առկա բակալավրիատում մեկ ուսումնական տարվա ընդհանուր բեռնվածությունը կազմում է 60 ECTS ($\pm 10\%$ տատանում): Հեռակա ուսանողների համար մեկ ուսումնական տարվա բեռնվածությունը 48 ECTS է ($\pm 10\%$ տատանում): Ամեն առարկային հատկացվում է 2-ից 6 ECTS, ինչը համապատասխանում է 60-ից 180 ժամ բեռնվածության: Ուսումնական ծրագրերը կառուցված են հաջորդականությամբ՝ ապահովելով առարկաների փոխկապակցվածությունը:

Նոր ծրագրերի հաստատման ընթացակարգը և յուրաքանչյուր քայլում պատասխանատվությունների բաշխվածությունը հստակ սահմանված են ՀՊՏՀ կրթական ծրագրերի նախագծման կանոնակարգում: Համաձայն ինքնավերլուծության՝ հաստատման գործընթացը թափանցիկ է և ներառում է ՀՊՏՀ Գիտական խորհրդի և Ուսումնամեթոդական խորհրդի բոլոր անդամներին:

Ինչ վերաբերում է ծրագրերի դադարեցմանը, ՀՊՏՀ-ն հայտնում է, որ առանձին կարգավորող փաստաթուղթ այդ առումով չկա: Մինչ այժմ ոչ մի բակալավրիական ծրագիր դադարեցված չէ: Մի շարք մագիստրոսական ծրագրերի արտոնագիր կասեցվել է ծրագրերի արդիականության կորստի և աշխատաշուկայում մասնագետների պահանջարկի բացակայության պատճառով: Արտոնագրի կասեցման վերջնական որոշումները հիմնվում են տարբեր վերլուծությունների վրա, որոնցում ներգրավված են ինչպես ներքին, այնպես էլ արտաքին շահակիցները: Վերլուծությունների արդյունքները քննարկվում են նիստերում, և եթե դրանք համարվում են հիմնավորված, կայացվում է համապատասխան որոշում: Ծրագրերի կասեցման վերաբերյալ որոշումները չեն ազդում արդեն սվյալ ծրագրերում ուսումնական գործընթացում ընդգրկված ուսանողների առաջընթացի վրա, քանի որ կասեցումը վերաբերում է միայն նոր ընդունելությանը: ՀՊՏՀ-ն ապահովում է, որ կասեցման պահին արդեն սովորող բոլոր ուսանողները կարողանան ավարտել իրենց ուսումը և ստանալ համապատասխան որակավորում: Բացառիկ դեպքերի կամ ֆորս մաժորային իրավիճակների դեպքում, երբ կրթական ծրագիրը հարկադիր կերպով ընդհատվում է, իրավական և այլ պատասխանատվությունները կարգավորվում են լիազորված կառավարման մարմնի հետ համագործակցությամբ:

Փորձագիտական գնահատում

Փորձագիտական այցի ընթացքում բոլոր շահակիցները հաստատեցին իրենց ակտիվ ներգրավվածությունը ՀՊՏՀ-ում կրթական ծրագրերի իրագործման գործընթացում և բարձր գնահատեցին այդ ներգրավվածության մակարդակը: ՀՊՏՀ-ի կրթական ծրագրերի ձևավորումն իրականացվում է ուսումնական ծանրաբեռնվածության բաշխման հիմնավորված մոտեցման վրա՝ ապահովելով համապատասխանություն ECTS կրեդիտային համակարգին և պարտադիր առարկաների, ընտրովի դասընթացների և ծրագրի այլ բաղադրիչների միջև հավասարակշռություն: ՀՊՏՀ-ն կիրառում է կառուցվածքային և մասնակցային մոտեցում կրթական ծրագրերի մշակման, գնահատման և մշտադիտարկման գործընթացներում՝ ղեկավարվելով «Կրթական ծրագրերի մշակման, գնահատման և մշտադիտարկման կարգով», որն ընդունվել է 2019թ. դեկտեմբերի 18-ին: Այդ կարգը համահունչ է հաստատության առաքելությանն ու տեսլականին, որոնք սահմանված են ՀՊՏՀ 2023–2027թթ. զարգացման ռազմավարությունում, և ապահովում է հստակ շրջանակ՝ սահմանելով ընթացակարգերը, պատասխանատվությունները և ներգրավված կողմերին բոլոր համապատասխան փուլերում: Կարգը հրապարակային է և հասանելի համալսարանի կայքում, ինչը նպաստում է թափանցիկությանը և հաշվետվողականությանը:

Կրթական ծրագրերի մշակումն իրականացվում է համալիր և հստակ ձևակերպված հաջորդականությամբ. այն սկսվում է աշխատաշուկայի կարիքների բացահայտումից, շարունակվում՝ ծրագրի նախաձեռնմամբ ամբիոնում, աշխատանքային խմբերի ստեղծմամբ, շահակիցների հետ խորհրդակցությամբ, ներքին վերանայմամբ, փորձագիտական գնահատմամբ և հաստատության ներսում բազմափուլ հաստատման գործընթացով: Այս գործընթացը մանրամասն փաստաթղթավորված է և ներառում է բազմաթիվ վերանայման և հետադարձ կապի փուլեր՝ ապահովելով համապատասխանություն հաստատության նպատակներին և արտաքին պահանջներին: Պատասխանատվությունները հստակ բաշխված են ակադեմիական ստորաբաժանուհիների, Որակի ապահովման բաժնի, Կրթական գործընթացի կառավարման բաժնի և կառավարման մարմինների միջև, ինչպիսիք են Ուսումնական և մեթոդական հանձնաժողովը և Գիտական խորհուրդը:

Փորձագիտական խումբը գնահատում է ՀՊՏՀ-ի հանձնառությունը՝ «բենչմարքինգը» կիրառելու որպես որակի բարելավման գործիք: Ծրագրերի մշակման գործընթացում կատարվում է համեմատական վերլուծություն Եվրոպայի, Միացյալ Նահանգների և Ռուսաստանի առաջատար բուհերի ուսումնական ծրագրերի հետ: Շահակիցների ներգրավվածությունն այլ կարևոր բաղադրիչ է. այն նկատվում է տարբեր փուլերում և տարբեր միջոցներով: Միևնույն ժամանակ համալսարանը գիտակցում է, որ շահակիցների քարտեզագրման մեթոդաբանական կատարելագործումը կնպաստի ներքին և արտաքին շահակիցների՝ հատկապես գործատուների և շրջանավարտների համակարգված ընդգրկմանը (Խորհրդատվություն 5):

Բոլոր կրթական ծրագրերը համահունչ են թե՛ Եվրոպական որակավորումների շրջանակին, թե՛ Որակավորման ազգային շրջանակին: Ուսումնառության արդյունքները մեծամասամբ սահմանվում են գիտելիքների, հմտությունների և կարողությունների տեսանկյունից՝ հստակ կապ ապահովելով շրջանավարտների պրոֆիլների և կարիերայի ուղիների հետ: Որոշ դեպքերում

ուսումնական արդյունքները «Կառավարում» ծրագրի դասընթացների համար, օրինակ՝ «Ձեռնարկությունների տնտեսագիտություն», «Կառավարման հիմունքներ», «Ռազմավարական կառավարում», «Կազմակերպական կառավարում», «Պետական կառավարում» և այլն, խմբավորված չեն գիտելիքների, հմտությունների և կարողությունների համատեքստում: ՀՊՏՀ-ին անհրաժեշտ է ճշգրտել ուսումնական արդյունքների ձևակերպումը՝ ապահովելու համաչափություն, միջազգային չափանիշների համապատասխանություն և աջակցելու ուսանողների շարժունությանը և զբաղվածությանը (Խորհրդատվություն 6):

2023 թվականից ՀՊՏՀ-ում ներդրվել է հինգ միջառարկայական մագիստրոսական ծրագիր՝ առողջապահության, տվյալագիտության, տեղեկատվական տեխնոլոգիաների և հանրային կառավարման ոլորտներում: «Կանաչ տնտեսության կառավարում» մագիստրոսական կրթական ծրագիրն էլ ներկայումս գտնվում է լիցենզավորման փուլում: Այս ծրագրերը դրականորեն ընդունվել են աշխատաշուկայի ներկայացուցիչների կողմից և դիտարկվում են որպես լավ փորձի օրինակներ, որոնք վկայում են աշխատաշուկայի նոր պահանջներին արձագանքելու կարողության և միջառարկայական կրթության ներուժի մասին: Գործատուները կարևորում են համատեղ մշակված ծրագրերը և միջառարկայական բաղադրիչների ներառումը ուսումնական ծրագրերում՝ նորարարության խթանման և արդիականության բարձրացման նպատակով: Փորձագիտական խումբը կիսում է այս մոտեցումը և խորհուրդ է տալիս ընդլայնել նման նախաձեռնությունները՝ ապահովելու դրանց ավելի լայն ազդեցությունը:

Ուսումնական ծրագրերի կառուցվածքը խթանում է ուսանողների ընտրության հնարավորությունը և առաջընթացը՝ ներառելով ընդհանուր, մասնագիտական և ընտրովի դասընթացներ: Ընտրովի դասընթացներն առաջարկվում են կայուն կերպով՝ վեց կիսամյակների ընթացքում՝ սկսած երկրորդ կուրսից, ինչը հնարավորություն է տալիս ուսանողներին ընտրել անհատականացված կրթական ուղիներ: Մա խթանում է ուսանողակենտրոն ուսուցումը և արձագանքում է թե՛ անհատական ձգտումներին, և թե՛ ոլորտային պահանջներին:

Չնայած առանձին կարգավորում այս պահին գոյություն չունի ծրագրերի դադարեցման համար, այդպիսի որոշումները հիմնվում են աշխատաշուկայի վերլուծության վրա, և ՀՊՏՀ-ն ապահովում է, որ այս ծրագրերի ուսանողները ստանան անհրաժեշտ աջակցություն մինչև ծրագրի ավարտը: Այս մոտեցումը վկայում է հաստատության ուսանողակենտրոն պատասխանատվության մասին, սակայն առաջարկվում է ստեղծել առանձին փաստաթուղթ կամ ծրագրերի մշակման և մոնիթորինգի կարգավորման մեջ ներառել դադարեցման գործընթացը՝ բարձրացնելու ընթացակարգային հստակությունն ու երկարաժամկետ պլանավորման հնարավորությունները (Խորհրդատվություն 7):

Եզրակացություն

Չափանիշը գնահատվում է մասամբ բավարար:

4. ԾՐԱԳՐԵՐԻ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄ ԵՎ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՎԵՐԱՆԱՅՈՒՄ

Հաստատությունը մշտադիտարկում և պարբերաբար վերանայում է իր ծրագրերը՝ համոզվելու, որ ծրագրերը հասնում են իրենց առջև դրված նպատակներին և արձագանքում են ուսանողների և հասարակության կարիքներին: Այս վերանայումները հանգեցնում են ծրագրերի շարունակական բարելավմանը: Ցանկացած գործողություն, որը պլանավորվել կամ ձեռնարկվել է արդյունքում, հաղորդվում է բոլոր շահակիցներից: [ESG, 1.9]

Մի շարք ստորաբաժանուժներ անմիջականորեն ներգրավված են ՀՊՏՀ-ի կրթական ծրագրերի շարունակական մշտադիտարկման և որակի ապահովման գործընթացներում: Դրանց շարքում են պրոռեկտորները, ամբիոնների վարիչները, ծրագրերի համակարգողները և Ուսումնական բաժինը:

ՀՊՏՀ-ի ուսումնական ծրագրերի մոնիթորինգը ներառում է քաղաքականություններ և գործընթացներ, որոնք հիմնված են ինչպես ներքին, այնպես էլ արտաքին կարգավորումների վրա: Հիմնական սկզբունքներն են.

- Ազգային և միջազգային մակարդակներում բենչմարքինգ և շարունակական կատարելագործում,
- Ինքնագնահատում և կենտրոնացված կանոնակարգեր,
- Ներքին և արտաքին շահակիցների ակտիվ ներգրավում որակի ապահովման գործընթացներում,
- Արդյունահենք կրթական ծրագրերի նախագծում և իրականացում,
- Ուսումնական միջավայրի բարելավում:

Ինքնավերլուծական զեկույցում նշվում է, որ ՀՊՏՀ-ի բոլոր կրթական ծրագրերը ենթակա են շարունակական մշտադիտարկման հետևյալ ընթացակարգերով.

1. Ուսանողական բավարարվածության հարցումներ, որոնք իրականացվում են անանուն ձևով՝ տարին երկու անգամ՝ յուրաքանչյուր կիսամյակի ավարտին, և գնահատում են ուսուցման, ուսումնառության և գնահատման որակը՝ համապատասխան նախատեսված ուսումնական արդյունքներին:
2. Ուսումնական առաջադիմության վերլուծություններ, որոնք գնահատում են կրթական ծրագրերի առանձին բաղադրիչներում կրեդիտների կուտակումը, ուսանողների առաջադիմությունը և գնահատականների համեմատական վերլուծությունները:
3. Ավարտական հանձնաժողովի զեկույցներ, որոնք կազմվում են հանձնաժողովի նախագահի կողմից և պարտադիր ներառում են հանձնաժողովի անդամների և արտաքին փորձագետների կարծիքները:

Բացի այդ, ծրագրերի մշտադիտարկումն իրականացվում է՝ վերլուծելով աշխատաշուկայի պահանջներն ու անհրաժեշտ կարողությունները և դրանք համեմատելով նախատեսված ուսուցման արդյունքների հետ: Կազմակերպվում են կանոնավոր հանդիպումներ և ֆոկուս խմբային քննարկումներ շահակիցների հետ, ինչպես նաև անցկացվում են հարցումներ արտաքին

շահակիցների շրջանում: Ծրագրերի շարունակական մշտադիտարկման և հնարավոր խնդիրների հայտնաբերման կարևոր բաղադրիչ է ուսանողների 25% ներկայացվածությունը ֆակուլտետային խորհուրդներում, որտեղ ուսանողներն ակտիվորեն մասնակցում են որակի ապահովման և ծրագրերի վերանայման գործընթացներին: Ըստ ինքնավերլուծության՝ ՀՊՏՀ-ն անընդհատ թարմացում է իր կրթական ծրագրերը՝ հիմնվելով գնահատման և մշտադիտարկման միջոցառումների արդյունքների վրա, որոնք ներառում են ինչպես ներքին, այնպես էլ արտաքին շահակիցներին: Քանի որ ՀՊՏՀ-ն ձգտում է ապահովել որակի ապահովման գործընթացների թափանցիկությունը և բոլոր շահակիցների իրազեկվածությունը կատարվող բարելավումների վերաբերյալ, այն իր որակի ապահովման գործունեության տարեկան հաշվետվությունները ներառում է տարեկան գործունեության հաշվետվություններում, որոնք հասանելի են ՀՊՏՀ կայքում: Բացի այդ, տարբեր հարցումների արդյունքները ներկայացվում և քննարկվում են ՀՊՏՀ Գիտական խորհրդի նիստերում, որտեղ ընդգրկված են բոլոր ներքին շահակից խմբերի ներկայացուցիչները:

Փորձագիտական գնահատում

Ծրագրերի մշտադիտարկումն իրականացվում է հիմնվելով ինստիտուցիոնալ կարողությունների, աշխատաշուկայի պահանջների և ծրագրային արդյունքների համեմատական վերլուծության վրա: Այս վերլուծական մոտեցումը վկայում է հաստատության հանձնառությունը շարունակական կատարելագործման մշակույթի նկատմամբ: 2023 թվականին ՀՊՏՀ-ն վերանայել է չորս բակալավրի և հինգ մագիստրոսի կրթական ծրագրեր. սա էական ձեռքբերում է, որը փաստում է ներքին գնահատման մեխանիզմների արդյունավետ իրագործման և ծրագրերի արդիականության ու արձագանքունակության ապահովման նպատակաուղղված քայլերի մասին:

ՀՊՏՀ-ում ներդրված է բազմաչափ հետադարձ կապի համակարգ, որն ապահովում է ուսանողների, դասախոսների, շրջանավարտների և գործատուների կարծիքների հավաքագրումը: Այն ներառում է ստանդարտացված հարցաթերթիկներ, պարբերական ֆոկուս-խմբային քննարկումներ, ինչպես նաև խորհրդատվություններ ոլորտի մասնագետների հետ, որոնք ներգրավված են կրթական գործընթացում: Ուսանողական խորհուրդը նույնպես դրսևորում է ակտիվություն՝ նախաձեռնելով սեփական հետադարձ կապի գործիքները, որոնք, ըստ փորձագիտական այցի արդյունքների, ապահովել են ավելի լայն ընդգրկվածություն, քան կենտրոնացված հարցումները:

Փորձագիտական այցի ընթացքում պարզ է դարձել, որ թեև ուսանողների մասնակցությունն ինստիտուցիոնալ հարցումներին ժամում է բավարարից բարձր մակարդակի վրա, նկատվել է նվազման միտում: Սա կարող է սահմանափակել հավաքագրված տվյալների հուսալիությունն ու ներկայացուցչականությունը: Փորձագիտական խումբը խորհուրդ է տալիս ձեռնարկել համապատասխան միջոցառումներ՝ ապահովելու և խթանելու ուսանողների մասնակցությունը որակի ապահովման գործընթացներին, մասնավորապես՝ հարցումներին (խորհրդատվություն 8): Առաջարկվող միջոցառումներն ընդգրկում են խթանների կիրառում (օր.՝ մասնակցության մակարդակի տեսանելի լինելը սահմանված ցուցանիշների նկատմամբ, նյութական խրախուսումներ), հետադարձ կապի ցիկլի երկարաձգումը (հարցումների իրականացման պարբերականության վերանայում՝ դրանք ամեն տարի չիրականացնելու նպատակով), ինչպես նաև հետադարձ կապի ձևաչափերի դիվերսիֆիկացումը՝ ներառելով ավելի որակական և

ձևավորիչ մոտեցումներ: Բացի այդ, փորձագիտական խումբն առաջարկում է մշակել հստակ ուղեցույցներ հարցումների արդյունքների վերլուծության և համատեքստային մեկնաբանության համար այն դեպքերում, երբ արձագանքման մակարդակը ցածր է, որպեսզի ապահովվի վավեր և հիմնավորված եզրակացությունների ստացումը (Խորհրդատվություն 9):

ՀՊՏՀ-ի որակի ներքին ապահովման համակարգում ներառված է նաև ուսանողների ուսուսման արդյունավետության, ակադեմիական առաջընթացի և շրջանավարտների ցուցանիշների մշտադիտարկման կառուցվածքային մոտեցում: Տվյալների վերլուծության արդյունքները, ինչպես նաև ուսանողների հետադարձ կապը, հիմք են հանդիսանում դասընթացների բովանդակության, լսարանային ժամերի և կրեդիտների բաշխման ճշգրտման համար: Սակայն, հաշվի առնելով, որ այս գործընթացում անանունության ապահովման ձևաչափը սահմանված չէ, փորձագիտական խումբը նպատակահարմար է համարում ներդնել պաշտոնական մեթոդաբանություն ուսանողների իրական ուսուսման արդյունավետության վերաբերյալ անանուն հետադարձ կապի հավաքագրման համար (օր.՝ այն ներառելով դասընթացների գնահատման գործընթացում) (Խորհրդատվություն 10):

Կրթական ծրագրերը նախագծվում են՝ հիմնվելով միջազգային չափանիշների և աշխատաշուկայի պահանջների վրա, ինչը երաշխավորում է, որ ուսուսման արդյունքները ձեռք բերվեն և համահունչ լինեն շրջանավարտի ակնկալիքներին: Դասախոսների հետ անհատական խորհրդատվությունները, դասախոսությունների և սեմինարների հավասարակշռված բաշխումը, ինչպես նաև ինքնուրույն հետազոտական աշխատանքի ինտեգրումը նպաստում են ակադեմիական խստապահանջ և ուսանողակենտրոն միջավայրի ձևավորմանը:

Կրթական ծրագրերի կառուցվածքը հավասարակշռված է. այն համադրում է հիմնական, մասնագիտական և ընտրովի բաղադրիչները՝ ապահովելով նաև գործնական ուսուցման հնարավորություններ, այդ թվում՝ պրակտիկաներ և ավարտական աշխատանքներ: Ընտրովի դասընթացների համակարգը հնարավորություն է տալիս ուսանողներին մասնագիտանալ և ձեռք բերել նպատակային կարողություններ՝ նպաստելով ուսանողակենտրոն ուսուցմանը և առաջընթացին:

Ծրագրերի նկարագրերը հրապարակված են ՀՊՏՀ պաշտոնական կայքում, իսկ ուսուսման պլանների ավելի մանրամասն տեղեկատվությունը հասանելի է ուսանողներին Moodle հարթակի միջոցով, որը թարմացվում է յուրաքանչյուր կիսամյակ: Բացի այդ, կազմակերպվում են լրացուցիչ տեղեկատվական հանդիպումներ ամբիոնների վարիչների, ծրագրերի համակարգողների և դասախոսների հետ, որոնք նպաստում են ուսանողների իրազեկվածությանը ծրագրերի կառուցվածքի և ուսուսման ծանրաբեռնվածության վերաբերյալ:

Որակի ապահովման գործընթացների արդյունքները համակարգված ձևով փաստագրվում են որակի ապահովման տարեկան հաշվետվություններում, որոնք ներառվում են համալսարանի տարեկան համապարփակ հաշվետվությունների համակարգում: Այս հաշվետվությունները հրապարակվում են հաստատության կայքում՝ ընդգծելով ՀՊՏՀ-ի պարտավորվածությունը թափանցիկության նկատմամբ: Ուսուսման ծրագրերի հարցումների արդյունքները ներկայացվում և քննարկվում են Գիտական խորհրդի նիստերին, որտեղ ներկայացված են ներքին շահակից հանդիսացող բոլոր խմբերը՝ դասախոսներ, ուսանողներ և վարչական անձնակազմ: Այս

ընդգրկուն մոտեցումն ապահովում է ծրագրերի բարելավման համատեղ գործընթաց և նպաստում է տվյալահենք որակի մշակույթի պահպանմանը:

Եզրակացություն

Չափանիշը գնահատվում է բավարար:

5. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅՈՒՆ, ԴԱՍԱՎԱՆԴՈՒՄ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Հաստատությունն ապահովում է, որ ծրագրերն իրականացվեն այնպես, որ խրախուսեն ուսանողներին ակտիվ դեր ստանձնել ուսումնառության գործընթացում, և ուսանողների գնահատումն արտացոլի այս մոտեցումը: [ESG, 1.3]

ՀՊՏՀ-ում ներդրվել է ուսանողակենտրոն ուսուցման քաղաքականություն, որը դրսևորվում է ուսուցման և ուսումնառության մեթոդների բազմազանությամբ, գնահատման մոտեցումներով, ինչպես նաև ուսանողների ակտիվ ներգրավմամբ ուսուցման գործընթացների կատարելագործման մեջ: Համաձայն ինքնավերլուծության՝ ՀՊՏՀ-ի ուսումնառության գործընթացը դինամիկ է և ներառում է տարբեր մոտեցումներ, ինչպիսիք են համակցված ուսուցումը (Blended Learning), խնդիրակենտրոն ուսուցումը (Problem-Based Learning, PBL), գործնական-կիրառական ուսուցումը գործատուների մասնակցությամբ, մասնագիտական պրակտիկաները և կիրառական նախագծերը: Ուսուցման և ուսումնառության մեթոդները ընտրությունը կատարվում է ուսուցման ակնկալվող արդյունքների հիման վրա՝ ապահովելով գիտելիքների, գործնական հմտությունների, մտավոր ունակությունների, փոխակերպող կարողությունների և սոցիալական կոմպետենցիաների զարգացում: Մեթոդների ընտրությունը համադրվում է նաև բակալավրի և մագիստրատուրայի կրթական ծրագրերի, գիտելիքների գնահատման և կառավարման կանոնակարգերի հետ: Համադրման այս դրսևորումն արտացոլված է կրթական ծրագրերում, որտեղ թեմատիկ բովանդակության մեջ հստակ սահմանվում են ընդհանուր և առարկայական ուսուցման արդյունքները՝ համապատասխան ուսուցման, ուսումնառության և գնահատման մեթոդներով: Ժամանակակից տեխնոլոգիաներն ուսուցման գործընթացում ներդնելու նպատակով ՀՊՏՀ-ն կիրառում է Moodle հարթակը, ինչպես նաև այլ թվային և տեղեկատվական գործիքներ:

Միջառարկայական ուսուցումը ներառված է ուսումնական պլանի նախագծման փուլում. դասընթացները բաժանված են ընդհանուր, մասնագիտական, մասնագիտացված և ընտրովի դասընթացների: Բացի այդ, դասախոսներն ուսումնական գործընթացում ներառում են միջառարկայական գիտելիքներ՝ կիրառելով առաջադրանքների ներկայացում, իրավիճակային խնդիրների և դեպքերի վերլուծություն, ինքնուրույն աշխատանք, ավարտական աշխատանքներ, ինչպես նաև արտադրական, հետազոտական և մանկավարժական պրակտիկաներ: Ուսանողների ակադեմիական հմտությունների զարգացմանը նպաստելու համար կրթական ծրագրերում ներառված են «Գիտական հետազոտությունների մեթոդաբանություն» դասընթացը և «Հետազոտական պրակտիկա»-ն: Այս գործընթացը լրացուցիչ ապահովվում է սեմինարների, աշխատաժողովների, գիտական քննարկումների, ինչպես նաև առցանց աղբյուրների

հասանելիության միջոցով, ինչը հնարավորություն է տալիս ուսանողներին զարգացնել հետազոտական կարողությունները, իրականացնել վերլուծական աշխատանքներ և ներգրավվել ակադեմիական միջավայրում, ինչպես ներկայացված է ինքնավերլուծական զեկույցում:

Ինչ վերաբերում է ՀՊՏՀ-ում գնահատման գործընթացներին, դրանք իրականացվում են «Գիտելիքների գնահատման և վարչարարության կազմակերպման կարգի» համաձայն: Գնահատման չափանիշները, ինչպես նաև գնահատման ձևերն ու մեթոդները, որոնք համահունչ են ուսուցման արդյունքներին, ներառված են ուսանողների ձեռնարկում, Գիտելիքների գնահատման և վարչարարության կազմակերպման վերաբերյալ կանոնակարգերում, դասընթացների ուսուժսական պլաններում և նկարագրություններում: Ուսանողի ձեռնարկում ներկայացված է կրեդիտների կուտակման և փոխանցման համակարգը, ինչպես նաև ուսանողների առաջադիմության բազմագործոն գնահատման մեթոդաբանությունը: Այն նաև ներառում է բացակայությունների արդարացման և մեղմացուցիչ հանգամանքների կիրառման կարգերը: Յուրաքանչյուր գնահատման մեթոդ հիմնված է նախապես սահմանված չափանիշների և ստանդարտների վրա, որոնք թափանցիկ կերպով հաղորդվում են թե՛ գնահատողին, թե՛ գնահատվողին: Այս չափանիշները բնութագրում են, թե որքանով են ձեռք բերվել նախատեսված ուսուցման արդյունքները և համահունչ են ընտրված գնահատման մեթոդներին: Գնահատման մեթոդներն ընտրվում են ուսուցման արդյունքներից ելնելով և ներառում են բանավոր քննություններ, գրավոր թեստեր, համակարգչային թեստավորում և հետազոտական աշխատանքի պաշտպանություն:

Դասախոսական կազմին տրվում է ազատություն իրենց դասընթացների համար ընտրելու գնահատման մեթոդները, չափանիշներն ու ստանդարտները: Դասախոսական կազմի կողմից գնահատման ռազմավարությունների մշակման և իրականացման գործընթացը խթանելու նպատակով ՀՊՏՀ-ն կիրառում է ուսուցման, ուսուժսառության և գնահատման միասնական համակարգ, որը համահունչ է վերջնարդյունքներին և իրականացվում է «Ուսուցում, ուսուժսառություն և գնահատում՝ վերջնարդյունքներին համապատասխան» կանոնակարգի համաձայն:

Փորձագիտական գնահատում

Համալսարանն իրականացնում է հստակ ձևակերպված և ինստիտուցիոնալ մակարդակով ամրագրված ռազմավարություն՝ նպաստելու ուսանողակենտրոն ուսուցմանը: Այդ նպատակով կիրառվում են տարբեր մեթոդներ, այդ թվում՝ ինտերակտիվ դասախոսություններ և սեմինարներ, խնդրահենք ուսուցման սեսիաներ, դեպքերի վերլուծություններ, խմբային և անհատական նախագծեր, ինչպես նաև թվային և խառը ուսուցման գործիքներ: Նշված ռազմավարությունը հետևողականորեն ներգրավվում է ուսուժսական ծրագրերի մշակման և իրականացվող մեթոդաբանության մեջ: Դասավանդման և ուսուցման տարբեր ձևաչափերի կիրարկումն ու բազմաբնույթ դիդակտիկ մոտեցումների օգտագործումը վկայում են դրա գործնական կիրառման մասին: Հատկապես կարևոր են լսարանային ուսուցման և գործնական բաղադրիչների համադրությամբ իրականացվող դասընթացները (սեմինարներ):

Ուսանողական կարծիքները համակարգված կերպով հավաքագրվում և ներառվում են ուսուժական ծրագրերի վերանայման և ճշգրտման գործընթացներում: Դասավանդման մեթոդների բազմազան կիրառման փաստագրված օրինակները փաստում են ուսանողակենտրոն մոտեցման գործնական իրագործումը:

Համալսարանն իրականացնում է պարբերական գնահատուժներ, մասնավորապես՝ դասախոսական կազմի ձևավորման և արդյունավետության տարեկան գնահատում և դասախոսների դասավանդման վարկանշավորում՝ ուսանողների բավարարվածության հարցումների հիման վրա: Վերջիններս անցկացվում են յուրաքանչյուր կիսամյակի ավարտին՝ ապահովելով ուսանողների անանուն մասնակցությունը: Սա հնարավորություն է տալիս գնահատել, թե դասավանդման և ուսուցման կիրառվող մեթոդները որքանով են համահունչ նախատեսված վերջնարդյունքներին:

Փորձագիտական այցի ընթացքում հաստատվեց, որ վերանայման գործընթացները կառուցվածքային առումով ամրագրված են և իրականացվում են շարունակական հիմքով: Գնահատուժների արդյունքները ներառվում են որակի ապահովման և ծրագրերի հետագա կատարելագործման գործընթացներում: Ստանդարտի պահպանումը հաստատված է:

Համալսարանն ապահովում է, որ ուսուցման և դասավանդման մեթոդները հաշվի առնեն ուսանողների բազմազանությունը և համահունչ լինեն նրանց տարբեր ուսուժական կարիքներին: Այդ նպատակով կիրառվում են անհատական աջակցության ծառայություններ և ճկուն ուսուցման ձևաչափեր, որոնք հնարավորություն են տալիս ուսանողներին կառուցել ինքնուրույն ուսուցման ուղիներ: Աջակցության ծառայությունները հասանելի են թափանցիկ ձևով և հաստատված են ինստիտուցիոնալ մակարդակում: Միաժամանակ արձանագրվել է, որ անհրաժեշտ ամբողջ գիտական գրականությանը հասանելիությունը դեռևս սահմանափակ է, ինչը խոչընդոտում է ինչպես հետազոտահենք ուսուցման, այնպես էլ գիտության վրա հիմնված ուսուցման լիարժեք իրականացումը: Այդ պատճառով փորձագիտական խումբը խորհուրդ է տալիս բարելավել ազգային և միջազգային գրականության (դասագրքեր, մոնոգրաֆիաներ, միջազգային նշանակության ամսագրեր) հասանելիության ենթակառուցվածքը համալսարանական մակարդակում (Խորհրդատվություն 11):

Համալսարանի ինստիտուցիոնալ շրջանակները նպաստում են ուսանողների պատասխանատվության բարձրացմանը և միաժամանակ ապահովում դասախոսների կողմից համապատասխան աջակցություն: Ուսանող-դասախոս փոխազդեցությունը հիմնված է փոխադարձ հարգանքի վրա և խթանվում է թիրախավորված միջոցառումներով (օր.՝ սեմինարներ, դասընթացներ՝ ինքնուրույնություն և հարգալից հաղորդակցություն զարգացնելու նպատակով): Նշված միջոցառումները նպաստում են ուսանողակենտրոն ուսուցման սկզբունքների գործնական իրագործմանը:

Համալսարանն առանձնահատուկ ուշադրություն է դարձնում միջառարկայական ուսուցման հնարավորությունների զարգացմանը: Դրան նպաստող առաջարկները՝ միջառարկայական մոդուլներ և համատեղ դասավանդման ձևաչափեր, ամրագրված են ուսուժական ծրագրերում և հնարավորություն են տալիս ուսանողներին ձեռք բերել ընդլայնված միջառարկայական կարողություններ:

Եզրակացություն

Չափանիշը գնահատվում է բավարար:

6.ՈՒՄԱՆՈՂՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ, ԱՌԱՋԱԴԻՄՈՒԹՅՈՒՆ, ՃԱՆԱԶՈՒՄ ԵՎ ՀԱՎԱՍՏԱԳՐՈՒՄ

Հաստատությունը հետևողականորեն կիրառում է նախապես սահմանված և հրապարակված կանոնակարգերը, որոնք ներառում են ուսանողական «կյանքի ցիկլի» բոլոր փուլերը, օրինակ՝ ուսանողների ընդունելությունը, առաջադիմությունը, ճանաչումը և հավաստագրումը: [ESG, 1.4]

Ընդունելություն

ՀՊՏՀ շարունակական կրթության բաժինը մշակում է դիմորդների ներգրավվածության քաղաքականությունը և կազմակերպում տարբեր միջոցառումներ՝ ուղղված ավագ դպրոցների և քոլեջների ուսանողներին՝ բաց դռների օրեր, ամառային դպրոցներ, աշնանային ճամբարներ, տնտեսագիտական շարադրությունների հանրապետական մրցույթներ, ինչպես նաև այցելություններ դպրոցներ: Ամեն տարի պատրաստվում են տեղեկատվական նյութեր և տեսանյութեր՝ ՀՊՏՀ-ն դիմորդներին ներկայացնելու համար: Համալսարանի պաշտոնական կայքում գործում է դիմորդների համար նախատեսված հատուկ բաժին:

ՀՊՏՀ-ի առկա և հեռակա բակալավրի կրթական ծրագրերի ընդունելությունն իրականացվում է ՀՀ պետական և ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների ընդունելության համապատասխան կանոնակարգերով և հիմնված է տվյալ ուսումնական տարվա համար կառավարության կողմից հաստատված մասնագիտությունների ցանկի վրա: Առկա և հեռակա բակալավրի կրթական ծրագրերի ընդունելության քննությունները լիովին համապատասխանում են միասնական պետական քննությունների բովանդակային և կազմակերպական պահանջներին: Միջազգային ուսանողների ընդունելությունը կազմակերպվում է «Օտարերկրյա քաղաքացիների ընդունելության կարգի» համաձայն: ՀՊՏՀ-ի ընդունող հանձնաժողովը, որի կազմում են ռեկտորը (նախագահ), պրոռեկտորը (նախագահի տեղակալ), պատասխանատու քարտուղարը, տեղակալ քարտուղարները և այլ անդամներ, կազմակերպում և իրականացնում է ընդունելության գործընթացը: Ընդունելությունն իրականացվում է միասնական պետական քննությունների միջոցով: Դիմորդները հանձնում են ընդունելության քննությունները նշանակված քննակենտրոններում, որոնք կազմակերպվում և իրականացվում են ՀՀ կառավարության ենթակայությամբ գործող «Գնահատման և թեստավորման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից: Ընդունելության մրցույթի վերջնական արդյունքները հաստատվում են ազգային ընդունող հանձնաժողովի կողմից:

Ընդունելության գործընթացում համալսարանի որոշմամբ իրականացվում են երեք հիմնական բաղադրիչներ.

1. Ուսման վարձավճարների սահմանում՝ ըստ ուսուցման ձևերի:

2. Ընդունելության քննություններ, որոնք բխում են տվյալ կրթական ծրագրի պահանջներից և առանձնահատկություններից:

3. Կրթական տեղերի բաշխում՝ ըստ մասնագիտությունների և կրթական ծրագրերի:

Համաձայն ինքնավերլուծության՝ ՀՊՏՀ-ն կազմակերպում է կողմնորոշիչ ծրագրեր, որոնք ընդգրկում են ակադեմիական, սոցիալական և վարչական ասպեկտներ՝ նոր ուսանողների ինտեգրումը հեշտացնելու համար: Գործում է նաև կուրսղեկների (կուրատորների) համակարգ, որի շրջանակում դասախոսները առաջին կուրսից սկսած նշանակվում են որպես կուրատորներ: Կուրատորները ուսանողներին տրամադրում են բազմաբնույթ խորհրդատվություն, ներառյալ համալսարանի և ֆակուլտետի գործունեության վերաբերյալ մանրամասն տվյալներ: Ավագ կուրսերում կուրատորներն անհրաժեշտության դեպքում աջակցություն են տրամադրում և հանդես են գալիս որպես կապող օղակ ուսանողների և ֆակուլտետների միջև:

Ուսանողներին իրենց իրավունքների և պարտականությունների, ակադեմիական գործընթացների, կարգապահական կանոնների, բողոքարկման ընթացակարգերի և քննությունների վերաբնության հնարավորությունների վերաբերյալ իրազեկելու նպատակով Ուսանողական խորհուրդը պաշտոնական էջում հրապարակում է տեղեկատվական տեսանյութեր: Բացի այդ, «Ուսանողի ուղեցույցը» ներառում է բոլոր ակադեմիական ասպեկտները՝ սկսած հաճախումից մինչև քննություններ, ինչպես նաև տեղեկություններ ֆակուլտետների տեղաբաշխման և համալսարանի տարբեր ստորաբաժանուժների հասանելիության վերաբերյալ:

Առաջադիմություն

ՀՊՏՀ-ում ներդրված է ուսումնական գործընթացների, փաստաթղթաշրջանառության և տեղեկատվության հասանելիության էլեկտրոնային կառավարման ավտոմատացված համակարգ: Այն բաղկացած է մի շարք բաժիններից, ներառյալ՝ «Դասաժամերի աղյուսակ», «Ուսանող», «Գիտություն», «Աշխատող», «Գրառուժներ», «Առաջադիմություն», «Ավարտում» և այլն: Համակարգում առկա են նաև դաշտեր ուսանողների կարգավիճակի կարգավորման, հաշվետվությունների, տեղեկանքների և դասընթացների բաշխման վերաբերյալ՝ ապահովելով ուսումնական գործընթացին վերաբերող ամբողջ տեղեկատվության կենտրոնացվածություն մեկ միասնական հարթակում: Համակարգը ներառում է ինչպես առկա, այնպես էլ հեռակա ուսուցման բոլոր կրթական ծրագրերի ուսանողներին և դասախոսներին: Հարթակը նաև հնարավորություն է տալիս կառավարելու և գեներացնելու ուսումնական գործընթացների, ուսանողների առաջադիմության, հաճախուժների, վերջնական ատեստավորման, միջին որակական գնահատման (իրական, կիսամյակային, տարեկան և համախառն) և շարժունության վերաբերյալ վիճակագրական հաշվետվություններ:

Այս ամենը նպաստում է համալսարանի ուսումնական գործընթացների իրական ժամանակում վիճակագրական մոնիթորինգի իրականացմանը և տվյալների վրա հիմնված որոշումների կայացմանը:

Ուսանողների առաջադիմության վերաբերյալ անհատականացված հետադարձ կապն ապահովվում է խորհրդատուների համակարգի, ֆակուլտետային ուսանողական խորհուրդների և ֆակուլտետի ղեկավարության միջոցով: Այս կառույցները պարբերաբար կազմակերպում են

հանդիպումներ ուսանողների հետ՝ նպաստելով ուսումնական գործընթացում առաջացող դժվարությունների հաղթահարմանը: Հատուկ ուշադրություն է դարձվում ցածր առաջադիմություն ունեցող ուսանողներին, ինչպես նաև նրանց, ովքեր դժվարանում են հաճախել դասերին և տիրապետել ուսումնական նյութին: Դասախոսները և խորհրդատուները մշտապես վերահսկում են ուսանողների մասնակցությունն ու հաճախումները՝ տրամադրելով անհրաժեշտ աջակցություն համալսարանի ներքին կարգավորումների շրջանակներում:

Բակալավրական և մագիստրոսական կրթական ծրագրերում եզրափակիչ գնահատումներից առաջ կազմակերպվում են խորհրդատվություններ և նախաքննական հանդիպումներ, որոնք արտացոլվում են յուրաքանչյուր դասախոսի անհատական բեռնվածության մեջ: Բացի այդ, Ուսանողական խորհուրդը նախաքննական ժամանակահատվածում իրականացնում է տեղեկատվական և ուսուցողական հանդիպումներ՝ ապահովելով ուսանողների իրազեկվածությունը քննությունների ընթացակարգերի և բողոքարկման գործընթացի վերաբերյալ: ՀՊՏՀ-ի կրթության և գնահատման կանոնակարգերն ու քաղաքականությունները նախատեսված են հավասար հնարավորությունների ապահովման համար՝ անկախ ուսանողի կարգավիճակից, ուսուցման ձևից, ընտրված ֆակուլտետից, մասնագիտությունից կամ սոցիալական դիրքից:

Ճանաչում

Համաձայն ինքնավերլուծության՝ ՀՊՏՀ-ում ուսանողների շարժունությունը և մեկ ուսումնական մակարդակից կամ այլ համալսարանից ընդունելությունն իրականացվում են «Ուսանողների ակադեմիական շարժունության կարգավորում բարձրագույն ուսումնական հաստատություններում» և «Բարձր ակադեմիական ցուցանիշ ունեցող քոլեջների շրջանավարտների շարունակական կրթության կարգավորում բարձրագույն ուսումնական հաստատություններում» կանոնակարգերի համաձայն: Ամբողջական վերանայում և թարմացում կարող են իրականացվել միայն իրավասու մարմնի կամ կառավարության կողմից: Բացի առարկայական քննություններից և մրցույթներում մասնակցությունից, ՀՊՏՀ ընդունման միակ սահմանափակումը՝ այլ համալսարաններից տեղափոխվող կամ շարունակական կրթություն ստացող ուսանողների համար, ապահովված լիցենզավորված ուսումնական տեղերի առկայությունն է: Համաձայն ինքնավերլուծության՝ այս սահմանափակումը պայմանավորված է արդեն համալսարանում գրանցված ուսանողների մեծ թվով:

Միջազգային համագործակցության ոլորտում ՀՊՏՀ-ն նպատակաուղղված քայլեր է իրականացնում ուսանողական շարժունության ընդլայնման համար Erasmus+ ծրագրի շրջանակներում, ինչպես նաև ավելացվող թվով ուսանողների ներգրավման ուղղությամբ միջազգային և տեղական կազմակերպությունների հետ համատեղ ուսանողական նախագծերում: Այս պահի դրությամբ ՀՊՏՀ-ն համագործակցություն ունի Գերմանիայի, Վրաստանի, Ղազախստանի, Ղրղզստանի և Չինաստանի բարձրագույն ուսումնական հաստատությունների հետ: Վերջին տարիներին արտերկիր մեկնող ուսանողների շարժունության մակարդակը շարունակաբար աճում է, ինչը վկայում է համալսարանի ռազմավարական մոտեցման արդյունավետության մասին:

Որակավորման շնորհում

Համաձայն ինքնավերլուծության՝ բակալավրի և մագիստրոսի ծրագրերի նախատեսված ուսուժական արդյունքներին համապատասխան գիտելիքների և հմտությունների ձեռքբերումը հաստատվում է ավարտական և մագիստրոսական թեզերի պաշտպանությամբ: Այս գործընթացն իրականացվում է «ՀՊՏՀ-ում ավարտական թեզի ավարտման, ներկայացման և հանրային պաշտպանության կանոնակարգի» և «ՀՊՏՀ-ում մագիստրոսական թեզի ավարտման, ներկայացման և հանրային պաշտպանության կանոնակարգի» համաձայն: Վերջնական գնահատականները և դրանց հրապարակումը որոշվում են «ՀՊՏՀ-ում ավարտական հանձնաժողովի կազմավորման և գործունեության կարգի» համաձայն: Ավարտական հանձնաժողովի գնահատականների վերանայման և բողոքարկման գործընթացն իրականացվում է «ՀՊՏՀ-ում գնահատականների քննարկման և բողոքարկման կարգի» համաձայն: Բակալավրի և մագիստրոսի որակավորման շնորհումն իրականացվում է պահանջվող ընդհանուր կրեդիտներին ամբողջապես հասնելուց հետո՝ բակալավրի ծրագրերի համար 240 ECTS, մագիստրոսի ծրագրերի համար՝ 60, 90 կամ 120 ECTS՝ կախված ծրագրից:

Ավարտական թեզերի և մագիստրոսական թեզերի թեմաների ընտրության գործընթացը, ժամանակացույցի սահմանումը և վերջնական ավարտական գործընթացը կարգավորվում են «ՀՀ բարձրագույն մասնագիտական կրթության ուսուցման հաստատությունների շրջանավարտների ավարտական հանձնաժողովի գործընթացի կանոնակարգի» համաձայն: Ավարտական գործընթացը հաղթահարած շրջանավարտները ստանում են դիպլոմ և դիպլոմի հավելված: Դիպլոմի հավելվածը համարվում է դիպլոմի անբաժանելի մաս և առանց դիպլոմի չի հանդիսանում վավեր:

Պահանջները որակավորման և ավարտական փաստաթղթերի ստացման համար հասանելի են ուսանողներին և բոլոր շահակիցներին ուսուժառության առաջին օրից:

Փորձագիտական գնահատում

ՀՊՏՀ-ի ընդունելության գործընթացներն իրականացվում են պետական կարգավորումների համաձայն և կազմակերպվում են Համալսարանի Ընդունելության հանձնաժողովի կողմից՝ շարունակական կրթության բաժինների աջակցությամբ: ՀՊՏՀ-ն ապահովում է ընդունելության թափանցիկ և հասանելի գործընթացներ, որոնք համապատասխանում են պետական կարգավորումների պահանջներին: Ընդունելության պահանջների, ընթացակարգերի և ուսուժական ծրագրերի վերաբերյալ տեղեկատվությունը հասանելի է դիմորդներին և ուսանողներին ՀՊՏՀ-ի պաշտոնական կայքում: Առանձին բաժին նախատեսված է նաև միջազգային ուսանողների համար, որը պարունակում է մանրամասն տեղեկություններ դիմումի ընթացակարգերի, անհրաժեշտ փաստաթղթերի և ընդունելության քննությունների ձևաչափերի վերաբերյալ:

Այցի ընթացքում ուսանողները և աշխատակազմի ներկայացուցիչները նշեցին, որ ՀՊՏՀ-ն, հատկապես շարունակական կրթության բաժինը, շարունակաբար կազմակերպում է տարբեր միջոցառումներ՝ միջնակարգ կրթություն ստացողների ներգրավման նպատակով, ներառյալ բաց դռների օրեր, ամառային ճամբարներ, էսսեների մրցույթներ և դպրոցների այցելություններ:

Այսպիսով, հաստատության հաղորդակցման և թվային հարթակների արդյունավետությունը հաստատվեց այցելության ընթացքում ստացած հետադարձ կապի միջոցով:

Հաստատությունն ապահովում է ընդունելության չափորոշիչների համաչափ կիրառումը՝ կանոնավոր վերանայումների և հաստատումների միջոցով՝ պահպանելով արդիականությունը և արդարությունը: Ըստ ինքնավերլուծության և փորձագիտական այցի՝ վերջին տարիներին ՀՊՏՀ-ում ընդունելության շեմը բարձրացվել է: Առաջին կուրսի ուսանողների ինտեգրացիան ապահովում է հարմարեցված ծրագրերով և կառավարվող ռեսուրսներով: Այցի ընթացքում ուսանողները բարձր գնահատեցին ՀՊՏՀ-ի ինտեգրացիոն աջակցության արդյունավետությունը:

Ուսանողների առաջընթացը ՀՊՏՀ-ում արդյունավետ կերպով վերահսկվում է Ուսումնական կառավարման համակարգի (UMS) միջոցով: Ուսանողներին հասանելի են թվային գործիքներ, ինչպիսիք են Moodle և UMS համակարգերը, որոնք ապահովում են ակադեմիական գործընթացների թափանցիկությունը և առաջընթացին հետևելը:

Ուսանողները ստանում են անհատականացված աջակցություն նաև ֆակուլտետային կառույցների միջոցով: Համակարգը ներառում է դասացուցակների, մասնակցության, գնահատականների, ավարտական գործընթացների և վիճակագրական հաշվետվությունների մոդուլներ: UMS համակարգը հնարավորություն է տալիս իրական ժամանակում հետևել ուսանողների ակադեմիական առաջընթացին և ապահովում է տվյալների վրա հիմնված որոշումների ընդունման հնարավորություններ: Համակարգն ակտիվորեն օգտագործվում է ուսանողների և դասախոսների կողմից ակադեմիական առաջադրանքների կառավարման և արդյունավետության մոնիթորինգի համար, թեև անհրաժեշտ է Moodle պլատֆորմի ավելի խորը ինտեգրում (Խորհրդատվություն 12):

Հաստատությունը կիրառում է մեխանիզմներ ակադեմիական դժվարությունների առջև կանգնած ուսանողների հայտնաբերման և աջակցման համար՝ առաջարկելով անհատականացված միջամտություններ և աջակցման ծառայություններ, ինչպիսիք են քննությունների նախապատրաստման նիստերը և նախապաշտպանական խորհրդատվությունները: Հաստատությունն ունի մանրամասն նկարագրված քաղաքականություններ և գործողությունների պլաններ հավասար հնարավորությունների ապահովման համար՝ սահմանված ռազմավարություններով, չափելի արդյունքներով և կանոնավոր վերլուծություններով:

Ուսանողները գնահատել են խորհրդատուների համակարգը և ֆակուլտետային կոորդինատորների հետ կանոնավոր կապը՝ որպես հասանելի և արդյունավետ միջոցներ: Հաստատությունը հատուկ աջակցություն է տրամադրում այն ուսանողներին, ովքեր վտանգի տակ են ակադեմիական ձախողման առումով, իսկ նախապաշտպանական խորհրդատվությունները ներառված են դասախոսների աշխատանքային ծանրաբեռնվածության մեջ, ինչը ցույց է տալիս հաստատության պատրաստակամությունն ուսանողների պահպանման և աջակցման հարցում:

Ուսանողների ճանաչումն ու շարժունությունը կարգավորվում են ազգային քաղաքականություններով և հաստատության ներքին կարգավորող փաստաթղթերով՝ համաձայն «Ուսանողների ակադեմիական շարժունության» և «Շարունակական կրթության» կանոնակարգերի: Հաստատությունն ապահովում է ուսանողների շարժունության աջակցություն տարբեր մակարդակներով:

Արտաքին շարժունությունն ակտիվորեն խթանվում է Erasmus+ ծրագրի և մի շարք գործընկեր համալսարանների հետ երկկողմ համաձայնագրերի միջոցով: Փորձագիտական այցի ընթացքում ուսանողներն արտահայտեցին հետաքրքրվածություն շարժունության հնարավորությունների ընդլայնման հանդեպ և ցուցաբերեցին բարձր մակարդակի անգլերենի գիտելիք, ինչը հնարավորություն է տալիս մասնակցել միջազգային ծրագրերին: Համաձայն ինքնավերլուծության՝ վերջին երեք տարիների ընթացքում փոխանակման ծրագրերին մասնակցող ուսանողների թիվը շարունակաբար աճել է: Ներքին շարժունությունը խթանվում է համատեղ ծրագրերի միջոցով, ներառյալ ACCA-վավերացված Բակալավրի և Մագիստրոսի ծրագրերը հաշվառման և հարկային ոլորտներում:

Հաստատությունն ապահովում է ուսուցման գնահատման և արտաքին որակավորումների ճանաչման արդար, թափանցիկ կիրառում: Կարգավորող քաղաքականություններն ու ընթացակարգերը կանոնավոր կերպով վերանայվում և թարմացվում են՝ ապահովելու համար դրանց արդիականությունը և արդյունավետությունը: Արտաքին շահակիցները, այդ թվում աշխատաշուկայի ներկայացուցիչները, ակտիվորեն մասնակցում են ուսուսման ծրագրերի մշակման գործընթացին՝ ապահովելով դրանց համապատասխանությունը փոփոխվող աշխատաշուկայի պահանջներին:

Թեև հաստատությունը համակարգված կերպով ճանաչում է նախորդ ֆորմալ ուսուցումն ազգային և ինտերնացիոնալ շրջանակների միջոցով, ներկայումս չկան սահմանված ընթացակարգեր ոչ ֆորմալ կամ ինֆորմալ ուսուցման ճանաչման համար: Այնուամենայնիվ, սա որակի ապահովման բաժնի կողմից նշվել է որպես ապագա զարգացման ոլորտ (Խորհրդատվություն 13):

ՀՊՏՀ-ի որակավորման շնորհման գործընթացներն իրականացվում են համապատասխանաբար հաստատության և պետական կարգավորումներին՝ «Մագիստրոսական թեզի ավարտման, ներկայացման և հանրային պաշտպանության կանոնակարգ» և «Վերջնական ավարտական հանձնաժողովի ձևավորման և գործունեության ընթացակարգ» կանոնակարգերի համաձայն: Հաստատությունն ապահովում է ուսանողների համար փաստաթղթերի տրամադրումը, որոնք հնարավոր է վավերացնել և որը բացատրում է ստացած որակավորումը՝ ներառյալ նախատեսված ուսուսման արդյունքների, կոմպետենցիաների և ուսուսման առարկայի համատեքստի մանրամասն նկարագրությունը: Փաստաթղթավորումը համապատասխանում է արդի թվայնացման ստանդարտներին: Ինքնավերլուծությունում նշվում է, որ ուսանողները ստանում են իրենց որակավորումները՝ պահանջվող կրեդիտների հաջող կուտակումից և ավարտական թեզի հանրային պաշտպանությունից հետո, ինչպես բակալավրի, այնպես էլ մագիստրոսի մակարդակի համար:

Հաստատությունն իր շրջանավարտներին տրամադրում է դիպլոմներ և հավելվածներ, որոնք համապատասխանում են Բոլոնիայի ստանդարտներին: Փաստաթղթերը երկլեզու են և տրվում են ժամանակին:

Ամփոփելով փորձագիտական այցի արդյունքները՝ հարկ է նշել, որ ՀՊՏՀ-ն պահպանում է ուսանողական կյանքի ցիկլի գործընթացները, որոնք թե՛ պաշտոնապես հաստատված են, թե՛ ակտիվորեն վերահսկվում են՝ բարելավման նպատակով: Հաստատությունը ունի զարգացող

որակի մշակույթ՝ պատրաստակամությամբ ընդունելու փորձագիտական արձագանքը և իրականացնելու ուսանողական նախաձեռնությամբ փոփոխություններ:

Եզրակացություն

Չափանիշը գնահատվում է բավարար:

7. ԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄ

Հաստատությունը զարգացնում է իր դասախոսական կազմի կարողությունները: Կիրառվում են արդար և թափանցիկ գործընթացներ կադրերի հավաքագրման և զարգացման համար: [ESG, 1.5]

ՀՊՏՀ-ի դասախոսական կազմի զարգացման քաղաքականությունը հիմնված է ՀՊՏՀ-ի 2023-2027 թթ. զարգացման ռազմավարության դրույթների վրա: Այդ համատեքստում աստիճանաբար ներդրվում են մեխանիզմներ, որոնք միտված են խթանելու հետազոտական գործունեությունը, ապահովելու դրա որակի գնահատումը և խրախուսումը՝ նպատակ ունենալով ապահովել հետազոտությունների միջազգայնացումը:

ՀՊՏՀ-ի Որակի ապահովման ձեռնարկը (2023 թ.) սահմանում է դասախոսական կազմի հավաքագրման, ընտրության և մասնագիտական զարգացման քաղաքականությունը, որը բխում է ՀՀ Աշխատանքային օրենսգրքի, «Կրթության մասին» և «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքների, ինչպես նաև Համալսարանի կանոնադրության դրույթներից:

Համաձայն ինքնավերլուծության՝ ՀՊՏՀ-ի հիմնական դասախոսական գրեթե ամբողջ կազմն անցել է մասնագիտական վերապատրաստում և հավաստագրման գործընթաց, որն իրականացվել է արտաքին շահակիցների ներգրավմամբ: Այս գործընթացը հնարավորություն է ընձեռել երկարաժամկետ պայմանագրերի կնքման՝ մրցութային ընտրության կամ տարեկան արդյունավետության գնահատման հիման վրա: Բացի այդ, ՀՊՏՀ-ի դասախոսական կազմի գրեթե մեծ մասն անցել է դասավանդման մեթոդաբանության և հետազոտական հմտությունների զարգացման վերապատրաստումներ:

Դասավանդողների վերապատրաստումն ու հավաստագրումը ՀՊՏՀ-ում համարվում են պարտադիր և շարունակական գործընթաց, ըստ որի՝ յուրաքանչյուր դասախոս պարտավոր է առնվազն հինգ տարին մեկ անգամ անցնել վերապատրաստում: Մասնագիտական կարիքների բացահայտումն իրականացվում է ուսումնական տարվա սկզբին՝ Շարունակական կրթության բաժնի կողմից անցկացվող հարցումների միջոցով: Այս տվյալները հիմք են հանդիսանում ինչպես ընդհանուր, այնպես էլ մասնագիտացված վերապատրաստումների պլանավորման համար:

ՀՊՏՀ-ի Միջազգային կապերի բաժինը համագործակցում է միջազգային գործընկերների հետ՝ ապահովելով դասախոսական կազմի մասնակցությունը միջազգային փոխանակման և վերապատրաստման ծրագրերին: Բացի այդ, համալսարանը խրախուսում է SCOPUS-ում ինդեքսավորված գիտական հրապարակումները՝ տրամադրելով համապատասխան խրախուսումներ:

ՀՊՏՀ-ում հետազոտական արդյունքները ինտեգրվում են ուսումնական գործընթացի մեջ: Ամեն ուսումնական տարվա նախաշեմին ամբիոններում անցկացվում են նիստեր, որոնց ընթացքում քննարկվում են դասախոսների գիտական հրապարակումները, և դրանց առավել արժեքավոր արդյունքները ներառվում են համապատասխան առարկաների ծրագրերում:

Դասախոսական կազմի միջազգայնացումը խթանելու նպատակով ՀՊՏՀ-ի 2023–2027թթ. ռազմավարական զարգացման ծրագրով սահմանվել է տարեկան առնվազն 5%-ով ավելացնել դասախոսների՝ շարժունության ծրագրերին մասնակցության ցուցանիշը: 2027թ. -ին նախատեսվում է, որ հիմնական դասախոսական կազմի առնվազն 20%-ը վերջին հինգ տարվա ընթացքում մասնակցած կլինի գոնե մեկ միջազգային շարժունության ծրագրի: Արտաքին շարժունությունից բացի, ՀՊՏՀ-ն խրախուսում է նաև ներքին համագործակցությունը, որի շրջանակում կազմակերպվում են հատուկ քննարկումներ և հանդիպումներ՝ միջազգային փոխանակման ծրագրերին մասնակցած դասախոսների կողմից իրենց մասնագիտական փորձի և ուսումնառության մեթոդների փոխանակման նպատակով:

Դասախոսական կազմի գործունեության արդյունավետության գնահատումը կարգավորվում է «ՀՊՏՀ դասախոսական կազմի տարեկան արդյունավետության գնահատման և վարկանիշավորման կարգով»: Գնահատումը կատարվում է ամբիոնի վարիչի կողմից և ներառում է հետևյալ բաղադրիչները .

- 40% – ամբիոնի վարիչի գնահատում,
- 40% – ուսանողների գնահատում,
- 20% – դասավանդման գործընթացի նկատմամբ վերահսկողություն՝ հիմնված UMS և Moodle հարթակներում արձանագրված տվյալների վրա:

Ուսանողների ուսումնառության փորձի և գոհունակության գնահատումը համակարգված կերպով իրականացվում է տարեվերջյան և կիսամյակային հարցումների միջոցով .

- յուրաքանչյուր կիսամյակում ուսանողները լրացնում են գոհունակության հարցաթերթիկ,
- կրթական ծրագրի ավարտին շրջանավարտները մասնակցում են շրջանավարտի հարցմանը, որով գնահատում են իրենց կրթության որակը և ստացած արդյունքները:

Բոլոր ուսանողական հարցումները կազմակերպվում են անանուն կերպով՝ Moodle հարթակի միջոցով: Դասավանդման որակի համալիր գնահատման նպատակով ՀՊՏՀ-ն նաև հավաքագրում է հետադարձ կապ դասախոսներից և արտաքին շահակիցներից՝ ներառյալ շրջանավարտները և գործատուները: Այս հարցումները կազմակերպվում են տարին առնվազն մեկ անգամ՝ գնահատելու արդյունքները, ռեսուրսների բավարարությունը և շահակիցների կարիքները: Դրա համար ՀՊՏՀ-ն օգտվում է Կարիերայի կենտրոնի շրջանավարտների և գործատուների տվյալների բազաներից, ինչպես նաև կազմակերպվող ֆոկուս խմբային քննարկումներից:

Բոլոր ֆակուլտետներում թափուր հաստիքների մրցույթները կազմակերպվում են միասնական կարգով: Դասախոսական կազմի համալրման չափորոշիչները, նրանց նշանակման, վերապատրաստման, հավաստագրման և մրցույթների կազմակերպման ընթացակարգերը սահմանված են «ՀՊՏՀ դասախոսական կազմի ձևավորման կանոնակարգում» և «ՀՊՏՀ դասախոսական կազմի վերապատրաստման և հավաստագրման կանոնակարգում»:

2021թ. ՀՊՏՀ-ում ներդրվել են պաշտոնի անձնագրեր, որոնք սահմանում են պրոֆեսորի, դոցենտի, ավագ դասախոսի, դասախոսի և ասիստենտի պաշտոնների նկարագրերը, պահանջները և պարտականությունները: Սկսնակ դասախոսների համար գործում է մենթորության համակարգ, որի միջոցով նրանք ստանում են շարունակական մասնագիտական աջակցություն ամբիոնի փորձառու դասախոսներից:

Աշխատակիցների առաջխաղացումը և ազատումը կարգավորվում են «ՀՊՏՀ աշխատակիցների առաջխաղացման կարգով», «ՀՊՏՀ էթիկայի կանոնակարգով» և «ՀՊՏՀ ներքին կարգապահական կանոնակարգով»:

Փորձագիտական գնահատում

Ընդհանուր առմամբ, համալսարանը միջոցներ է ձեռնարկում ապահովելու, որ իր դասախոսական կազմը՝ հատկապես ուսուցման ոլորտում և աստիճանաբար նաև գիտահետազոտական գործունեության մեջ, ունենա համապատասխան որակավորումներ՝ ուսուսական ծրագրերի նպատակներին հասնելու համար, որոնք հիմնականում դեռևս կենտրոնացած են ուսուցման և կարիերայի պատրաստման վրա:

Դասախոսական կազմի որակավորումները համահունչ են ուսուցանվող առարկաներին: Շատ դասախոսներ ունեն մասնավոր հատվածում աշխատանքային փորձ, ինչը նպաստում է ուսանողների պրակտիկաների կազմակերպմանը: Մասնագիտական դաշտում ձեռք բերված փորձի և համագործակցության տարբեր մակարդակներում (համալսարան, ֆակուլտետ, ամբիոն և անհատական մակարդակ) ուսանողները ստանում են գործնական ուսուցում և պատկերացում իրենց ապագա մասնագիտության պահանջների և մարտահրավերների վերաբերյալ:

Դասախոսների համար պարբերաբար կազմակերպվում են լեզվի դասընթացներ՝ մասնավորապես նպաստելու նրանց գիտահետազոտական գործունեությանը միջազգային, անգլալեզու հրապարակումների համատեքստում: Ինչպես արդեն նշվել է, համալսարանական ենթակառուցվածքները խոչընդոտում են միջազգային արդիական գիտական գրականության հասանելիությունը, և անհրաժեշտ է այդ խոչընդոտը վերացնել: Հատուկ ընդգծվում է, որ պետք է բարելավել ենթակառուցվածքները՝ ապահովելու ազգային և հատկապես միջազգային գրականության (դասագրքեր, մոնոգրաֆիաներ, ինչպես նաև միջազգային նշանակություն ունեցող գիտական հանդեսներ) լայն շրջանակի հասանելիությունը (Խորհրդատվություն 11):

Բացի այդ, փորձագիտական խումբը հաստատում է, որ դասավանդման և հետազոտական գործունեության գնահատման կառուցվածք առկա է: Այնուամենայնիվ, դասավանդման և հետազոտության որակի գնահատման համար ավելի հստակ համակարգի կամ սանդղակի ներդրումը կնպաստի չափորոշիչների հստակեցմանը:

Եզրակացություն

Չափանիշը գնահատվում է բավարար:

8. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԶԱՐԳԱՅՈՒՄ

Հաստատությունը ապահովում է հետազոտական գործունեության իրականացումը և հետազոտության կապը դասավանդման և ուսումնառության հետ:

ՀՊՏՀ-ն առանձնահատուկ կարևորություն է տալիս գիտահետազոտական գործունեության ինտեգրմանը կրթական բոլոր աստիճաններում: Բակալավրիատի ուսանողները յուրաքանչյուր կիսամյակ կատարում են անհատական հետազոտական աշխատանքներ, մագիստրատուրայի ծրագրերում ներառված են կուրսային հետազոտություններ և IMRaD ձևաչափով եզրափակիչ թեզեր, իսկ ասպիրանտները ներգրավված են գիտական հրապարակումների պատրաստման և «Ամբերդ» հետազոտական կենտրոնում փորձառություն ձեռք բերելու գործընթացներում: «Հետազոտական մեթոդաբանություն» պարտադիր առարկան ներառված է թե՛ մագիստրատուրայի, թե՛ ասպիրանտուրայի ծրագրերում:

Համալսարանը վերանայել է ավարտական աշխատանքների և թեզերի պատրաստման կարգավորումները, ներդրել գրագողության հայտնաբերման համակարգեր և ընդլայնել գիտական ղեկավարների պատասխանատվությունը: Ուսանողները և աշխատակազմն ակտիվորեն մասնակցում են հետազոտական մրցույթների և «Ամբերդ» կենտրոնի դրամաշնորհային նախագծերին. 2020–2024թթ. դրանցում ներգրավված են եղել ավելի քան 150 դասախոս, 108 ասպիրանտ և 39 ուսանող:

ՀՊՏՀ ռազմավարական ծրագրերը (2018–2022թթ., 2023–2027թթ.) ուղղված են հետազոտահենք հաստատության դառնալուն, գիտական արդյունքների որակի բարձրացմանը և միջազգային համագործակցության ընդլայնմանը: Գիտական քաղաքականությունն ամրագրված է մի շարք հիմնարար փաստաթղթերում՝ Գիտահետազոտական զարգացման ռազմավարություն 2020–2024 թթ., Բաց գիտության ռազմավարություն 2021–2026թթ., Բաց հասանելիության քաղաքականություն:

Արդյունավետ խթանման մեխանիզմներ են ներդրվել. SCOPUS-ում ինդեքսավորված յուրաքանչյուր հրապարակման համար սահմանվել է 400,000 ՀՀ դրամի հավելավճար, ինչի արդյունքում միջազգային հրապարակումների թիվը զգալիորեն աճել է՝ 2023թ.՝ 53% աճ, իսկ 2024թ.՝ հոկտեմբերին՝ հավելյալ 30%: Գիտահետազոտական ծախսերը 2022թ. 147 մլն դրամից հասել են 2024թ. 235 մլն դրամի՝ կազմելով համալսարանի բյուջեի գրեթե 5%-ը:

ՀՊՏՀ-ն խթանում է նաև միջազգայնացումը. բուհն ունի ավելի քան 170 համագործակցության պայմանագիր, կազմակերպում է միջազգային գիտաժողովներ, հրատարակում է պարբերականներ («ՀՊՏՀ Տեղեկագիր», «Տնտեսություն և հասարակություն», «Ամբերդ» տեղեկագիր): 2021թ. համալսարանին շնորհվել է «Գիտահետազոտական ոլորտի կառավարման գերազանցության աստիճան» Եվրոպական հանձնաժողովի կողմից, և բուհն անդամակցել է EURAXESS նախաձեռնությանը:

Փորձագիտական գնահատում

ՀՊՏՀ-ն ապահովում է գիտահետազոտական գործունեության իրականացումն ու դրա կապը դասավանդման և ուսումնառության գործընթացների հետ: Ուսանողները ներգրավվում են

հետազոտական աշխատանքներում՝ ուսանողների գիտահետազոտական խորհրդի միջոցով, ինչպես նաև ուսումնական այն առարկաների շրջանակում, որոնք պահանջում են հետազոտություն իրականացնելու միջոցով ուսանողների վերջնարդյունքների ձեռքբերման հաստատում: Այդ նպատակով փորձագիտական խումբը խորհուրդ է տալիս առարկաների գրականության ցանկում ներառել հասանելի գիտական հանդեսներ՝ նպաստելու հետազոտության, դասավանդման և ուսումնառության փոխկապակցմանը (Խորհրդատվություն 15):

2022թ. մայիսի 27-ից համալսարանում ուժի մեջ են մտել «ՀՊՏՀ-ում բակալավրի ավարտական աշխատանքի կատարման, ներկայացման և հրապարակային պաշտպանության» և «ՀՊՏՀ-ում մագիստրոսական թեզի կատարման, ներկայացման և հրապարակային պաշտպանության» կանոնակարգերը: Ըստ այդ կանոնակարգերի՝ փոփոխվել են բակալավրի կրթական ծրագրերում անհատական աշխատանք պարունակող բաղադրիչների և մագիստրոսի կրթական ծրագրերում գիտահետազոտական աշխատանքի, ինչպես նաև բակալավրի ավարտական և մագիստրոսական թեզերի կառուցվածքային և բովանդակային պահանջները: Արդյունքում հաստատվել են մագիստրոսական և բակալավրի թեզերի նոր կառուցվածքային պահանջներ, որոնք համապատասխանեցվել են միջազգային մակարդակով ընդունված Ներածություն-Մեթոդներ-Արդյունքներ-Քննարկում (IMRaD) ձևաչափին:

ՀՊՏՀ-ում գրագողության համակարգի կիրառմամբ և աշխատանքի ինքնուրունության շեմի սահմանմամբ խթանվում է ուսանողների վերլուծական և ստեղծագործական մոտեցումն ավարտական աշխատանքների կատարման ընթացքում:

Դասախոսական կազմը հանդես է գալիս նաև որպես ակտիվ հետազոտող: Համալսարանի ռազմավարական ծրագրով (ՀՊՏՀ զարգացման ռազմավարություն 2023-2027թթ.) նախատեսված է, որ 2027 թվականին ամբողջ դրույքով դասախոսական կազմի 40%-ը ներգրավված լինի գիտահետազոտական գործընթացներում: Վերջին տարիներին գիտական հրապարակումների քանակն աճի միտում ունի, և սահմանված է նպատակ՝ տարեկան առնվազն 10%-ով ավելացնել միջազգային գիտական բազաներում (անգլերենով) հրապարակումների թիվը՝ որպես որակի ապահովման հիմնական ցուցանիշներից մեկը:

ՀՊՏՀ-ի տեսլականը շեշտադրում է գերազանցության կենտրոն դառնալու ձգտումը, որը կստեղծի և կհաղորդի տեսական և կիրառական գիտելիքներ: Համալսարանի առաքելությունն ընդգծում է այնպիսի մասնագետների պատրաստումը, որոնք մրցունակ կլինեն ինչպես ազգային, այնպես էլ միջազգային աշխատաշուկայում, ինչպես նաև կնպաստեն ՀՀ տնտեսական, սոցիալական, մշակութային և գիտատեխնոլոգիական զարգացմանը՝ որակյալ կրթության և կիրառական հետազոտությունների միջոցով: Գիտելիքի ստեղծման (հետազոտության) և դրա առևտրայնացման շեշտադրումը ձևավորում է լավ հիմք՝ ՀՊՏՀ-ում հետազոտության, ուսուցման և ուսումնառության փոխկապակցության համար:

Հետազոտական հետաքրքրությունների և ձգտումների խթանումն ամրագրված է համալսարանի 2023-2027թթ. զարգացման ռազմավարության 2-րդ ռազմավարական նպատակով՝ «Համալսարանի առաջնորդության և գիտության որակի բարձրացում», որն ունի հստակ ձևակերպված նպատակներ և ցուցիչներ:

Փորձագետական խումբը նշում է, որ ՀՊՏՀ գիտելիք ստեղծելու գործառույթը և գիտական վերջին արդյունքներն անհրաժեշտ է առավել արդյունավետորեն ինտեգրել կրթական ծրագրերում, ինչը թույլ կտա կրթական ծրագրերը չպայմանավորել միայն աշխատաշուկայի պահանջարկով: Միաժամանակ, հետազոտական վերջին արդիական արդյունքները ևս անհրաժեշտ է ներառել կրթական ծրագրերում:

ՀՊՏՀ-ում իրականացվում են նաև շրջանավարտների՝ աշխատաշուկայում մրցունակության ապահովման նպատակային քայլեր՝ ընդգրկելով ինչպես կազմակերպություն հիմնելու, այնպես էլ մասնագիտական աճի և աշխատանքի տեղավորման հմտությունների զարգացումը: Համալսարանում գործող «Փոփոխությունների լաբորատորիան» պարբերաբար կազմակերպում է ձեռնարկատիրական վերապատրաստումներ, որոնց նկատմամբ ուսանողների դրսևորած ոգևորությունը արժանի է դրական գնահատականի: Այս նախաձեռնությունը գովելի է և պետք է շարունակաբար ամրապնդվի:

Նշվում է նաև, որ 2020-2024թթ. նախատեսված է եղել առանձին հետազոտական գործունեության զարգացման ծրագիր: Ներկայումս գործող ՀՊՏՀ 2023-2027 թթ. զարգացման ռազմավարությունը ներառում է գործողությունների հստակ պլան՝ ուղղված չորս ռազմավարական նպատակների իրագործմանը: Այդ ծրագրի երկրորդ ռազմավարական նպատակը վերաբերում է գիտության որակի բարձրացմանն ու համալսարանի գիտական հեղինակության ամրապնդմանը, որտեղ ներկայացված են հիմնական գործողությունները, պատասխանատու ստորաբաժանումները և դրանց կատարման ժամկետները:

ՀՊՏՀ-ն ապահովում է գիտահետազոտական և զարգացման գործունեության իրականացումը հաստատված քաղաքականությունների և ընթացակարգերի միջոցով, մասնավորապես՝ Բաց գիտության ռազմավարություն 2021-2026թթ.: Համալսարանի զարգացման ռազմավարության և գիտահետազոտական ուղղությունների կապը հստակ արտահայտված է ՀՊՏՀ կազմում գործող «Ամբերդ» հետազոտական կենտրոնի գործունեության մեջ, որտեղ սահմանված են հետազոտական թեմաների և խմբերի ձևավորման, ինչպես նաև ասպիրանտների և ուսանողների ներգրավման հստակ գործընթացներ: Հետազոտական թեմաները ձևավորվում են ամբիոններում՝ համապատասխան ամբիոնների մասնագիտական ուղղվածությանը՝ միաժամանակ արտացոլելով տնտեսագիտության և կառավարման գիտահետազոտական արդի միտումները:

Համալսարանում նպատակահարմար է մշակել համալսարանական մակարդակի հետազոտական քաղաքականություն և արհեստական բանականության կիրառման քաղաքականություն, որոնք պետք է ներառեն հիմնական սկզբունքներն ու կառավարման կառուցվածքները՝ ապահովելու հետազոտությունների իրականացման և արհեստական բանականության կիրառման թափանցիկությունն ու միասնականությունը թե՛ դասավանդման և ուսուցման գործընթացներում, թե՛ հետազոտական և վարչարարական գործունեության շրջանակներում (Խորհրդատվություն 16):

ՀՊՏՀ-ում ընդունված է նաև դասավանդող անձնակազմի տարեկան գնահատման և վարկանիշավորման կարգ, որի շրջանակներում հրապարակումների գնահատման համար հատկացվող միավորները բավարար խթանիչ ազդեցություն չունեն՝ միջազգային գործընկերների հետ համահեղինակությամբ հրապարակումներ իրականացնելու համար: Ուստի, անհրաժեշտ է

խթանել հետազոտությունների միջազգայնացումը և այն ներառել դասախոսական կազմի տարեկան գնահատման գործընթացում (Խորհրդատվություն 17):

Եզրակացություն

Չափանիշը գնահատվում է բավարար:

9. ՌԵՍՈՒՐՍՆԵՐ ԵՎ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Հաստատությունն ունի համապատասխան ֆինանսավորում դասավանդման և ուսումնառության գործընթացների համար և ապահովում է համապատասխան և հասանելի ռեսուրսների և ուսանողների աջակցության տրամադրումը: [ESG, 1.6]

Ռեսուրսներ

Հանաձայն ինքնավերլուծության՝ ՀՊՏՀ 2024-2027 թվականների ռազմավարական ծրագիրը սահմանում է ենթակառուցվածքների զարգացման արդյունավետության ցուցանիշների հինգ հիմնական խումբ.

- ֆիզիկական ենթակառուցվածքի արդիականացում,
- թվային ենթակառուցվածքի թարմացում և միավորված համակարգում ինտեգրում,
- գիտակրթական ենթակառուցվածքի կատարելագործում,
- մարդկային ռեսուրսների զարգացման նպատակով մտավոր և սենսորային ենթակառուցվածքի արդիականացում,
- համագործակցային ցանցային ենթակառուցվածքի զարգացում:

Ֆիզիկական ենթակառուցվածքի արդիականացման 80%-ը նախատեսվում է ավարտել մինչև 2025 թ. -ը:

Ըստ ինքնավերլուծության՝ ՀՊՏՀ կառավարումն իրականացվում է ռազմավարական նպատակներին համապատասխան, որոնցից յուրաքանչյուրի համար սահմանվում են արդյունավետության և առաջընթացի ցուցանիշներ, ինչպես նաև նախատեսվում են անհրաժեշտ ֆինանսական ռեսուրսներ: Ֆինանսական ռեսուրսների կառավարումն իրականացվում է տարեկան բյուջեի կանխատեսման պատրաստման և ֆինանսական տարվա ավարտին փաստացի կատարման վերլուծության միջոցով: Եկամուտներն ու ծախսերը պլանավորվում և իրականացվում են հաստատված տարեկան բյուջեի համաձայն:

ՀՊՏՀ եկամուտների հիմնական մասը ձևավորվում է ուսման վարձավճարներից և պետբյուջեի հատկացումներից՝ անվճար ուսանողների ֆինանսավորման նպատակով: Վերջին տարիներին ՀՊՏՀ ընդհանուր բյուջեն շարունակել է աճել ուսանողների թվի ավելացման հաշվին: Բյուջեի զգալի մասն ուղղվում է կրթության որակի բարելավմանը. մասնավորապես, 2024 թ.-ին պրոֆեսորադասախոսական կազմի հիմնական աշխատավարձերը կազմել են ընդհանուր ծախսերի 36.85%-ը: Ֆինանսական ռեսուրսների բաշխման գործընթացում ՀՊՏՀ-ը ներգրավում է ինչպես ներքին, այնպես էլ արտաքին շահակիցներին՝ ապահովելով բազմազան կարիքների բավարարումը:

Համաձայն ինքնավերլուծության՝ ՀՊՏՀ ռեսուրսներն ու ենթակառուցվածքները սահմանված են որպես մարդկային ռեսուրսներ, շենքեր և շինություններ, հիմնական միջոցներ, գույք, տեխնիկական սարքավորումներ, ծրագրային ապահովում և տեղեկատվական համակարգեր, ինչպես նաև այլ նյութական և ոչ նյութական ռեսուրսներ:

ՀՊՏՀ-ն բաղկացած է 6 շենքից, որոնցից 5-ը գտնվում են Նալբանդյան 128 հասցեում, իսկ մեկ շենք՝ Ինֆորմատիկայի և վիճակագրության ֆակուլտետը, Պարույր Սևակ 77 հասցեում: ՀՊՏՀ ենթակառուցվածքների կազմում են՝ էլեկտրոնային գրադարան, QR գրադարան, «խելացի» պատեր, 4 մարզադահլիճ, հրաձգարան, միջազգային ծրագրերի կենտրոն (հանդիպումների և քննարկումների սենյակներ, հանգստի սրահներ):

Գրադարանը ներառում է գրքային ֆոնդ և երկու ընթերցասրահ, որոնցից մեկը գիտական ընթերցասրահ է: Մեկ այլ ընթերցասրահ գործում է Ինֆորմատիկայի և վիճակագրության ֆակուլտետում: Ընթերցասրահները հագեցած են համացանցային հասանելիությամբ և կարող են սպասարկել մինչև 120 ուսանողի: Գրքային ֆոնդը պարբերաբար թարմացվում է գրադարանի աշխատակազմի և կրթական ծրագրերի համակարգողների առաջարկությունների հիման վրա՝ տարեկան միջինում շուրջ 1100 նոր միավորով:

QR գրադարանն ունի շուրջ 200 միավոր ռեսուրս և հնարավորություն է տալիս ուսանողներին ներբեռնել գրքերի էլեկտրոնային տարբերակները առանց գրադարան այցելելու: Հիմնական ֆոնդում ներառված են դասագրքեր, ուսուսանական ձեռնարկներ, գիտաժողովների նյութեր, ամսագրեր, բառարաններ, ատլասներ, ինչպես նաև ատենախոսություններ և էլեկտրոնային հրատարակություններ:

KOHA գրադարանային համակարգն ապահովում է գրքային ֆոնդի թվայնացումը, էլեկտրոնային գրադարանի և կատալոգի ստեղծումը, ինչպես նաև ընթերցողների համար առցանց ծառայությունների մատուցումը:

ՀՊՏՀ-ն ունի ընդհանուր 125 լսարան, որոնց մեծ մասը հագեցած է ժամանակակից տեխնիկական միջոցներով (ինտերակտիվ էկրաններ, պրոյեկտորներ): ՀՊՏՀ-ում շարունակաբար իրականացվում է ենթակառուցվածքների (լսարաններ, դահլիճներ, մարզադահլիճներ) նորոգում: Բակալավրի կրթական ծրագրերը անցկացվում են երկու հերթափոխով, իսկ մագիստրոսական ծրագրերը՝ լրացուցիչ երրորդ հերթափոխով: Մեկ լսարանում ուսանողների թիվը չպետք է գերազանցի 50-ը:

Ուսանողների հատուկ կարիքները բավարարելու նպատակով ՀՊՏՀ-ում իրականացվում են հատուկ միջոցառումներ՝ ապահովելու նրանց լիարժեք ներառումը թե՛ ենթակառուցվածքների, թե՛ կրթական գործընթացի մակարդակներում: Ներառական կրթության զարգացման շրջանակում հաստատվել է «ՀՊՏՀ ուսանողների սոցիալական ներառման կարգը», որը նախատեսում է քայլեր՝ ուսանողների համար հավասար պայմաններ ստեղծելու ուղղությամբ:

ՀՊՏՀ-ում գործում է շենքերի և լսարանների բաշխման կարգ, որը նախատեսված է կրթական գործընթացի արդյունավետ կազմակերպման համար՝ հաշվի առնելով ուսանողների հատուկ կարիքները: Ամեն ուսուսանական տարվա սկզբին լսարանային ֆոնդի բաշխումը կատարվում է ֆակուլտետների միջև, և որպես կանոն, յուրաքանչյուր ֆակուլտետ օգտագործում է առանձին շենք:

2020 թվականից ՀՊՏՀ-ում ներդրված է «Moodle» էլեկտրոնային ուսուցման հարթակը, որը նպաստում է դասախոսների և ուսանողների առցանց համագործակցությանը: Համակարգը հնարավորություն է տալիս ուսանողներին օգտվել անհրաժեշտ նյութերից, մասնակցել ֆորումների և վիդեոկոնֆերանսների, հանձնել քննություններ և ներկայացնել առաջադրանքներ: Հարթակում տեղադրված են դասընթացների ծրագրեր, թեստեր, առաջադրանքներ, ընթերցանության ցուցակներ, էլեկտրոնային գրքեր և մեթոդական նյութեր: Համակարգը նաև ապահովում է ուսուցման գործընթացի շարունակական մշտադիտարկում, որը հնարավորություն է տալիս բացահայտել բարելավման ենթակա ուղղությունները:

2022 թվականին ստեղծվել է ՀՊՏՀ պահոցը՝ համալսարանի գրադարանի կողմից կառավարվող բաց, կուտակային էլեկտրոնային պահոց, որը նպատակ ունի ապահովելու ՀՊՏՀ-ի գիտահետազոտական արդյունքների արխիվացումը և դրանց հասանելիությունը լայն հանրությանը:

Ուսանողների աջակցություն

Ինքնավերլուծությունում նշվում է, որ ՀՊՏՀ-ն ուսանողների կրթական և մասնագիտական զարգացման համար ապահովում է բազմաբնույթ աջակցություն, ներառյալ՝ տեղեկատվական, խորհրդատվական, կարիերայի կողմնորոշման և գործնական փորձառության մեխանիզմներ: Ուսանողները ստանում են աջակցություն իրենց իրավունքների, պարտականությունների և կրթական գործընթացը կարգավորող դրույթների վերաբերյալ իրազեկման նպատակով: Դասընթացների խորհրդատուները տրամադրում են խորհրդատվություն՝ ուսման ընթացքում առաջացող դժվարությունները հաղթահարելու համար: Ամեն տարի սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին Ուսանողական խորհուրդը կազմակերպում է ուղղորդման ծրագիր առաջին կուրսեցիների համար՝ նրանց տեղեկացնելու համալսարանի կրթական և վարչական գործընթացների մասին և բացահայտելու նրանց կարիքները:

Բոլոր կրթական ծրագրերը ներառում են անհատական և խմբային խորհրդատվություններ, որոնք կազմակերպվում են ֆակուլտետի կողմից: ՀՊՏՀ-ի Կարիերայի կենտրոնը աջակցում է ուսանողներին պրակտիկայի նախապատրաստման և անցկացման գործընթացում, ինչպես նաև կարիերայի պլանավորման հարցերում:

ՀՊՏՀ-ն իրականացնում է ներառական կրթության զարգացման հայեցակարգ, որը սահմանում է ներառական կրթության զարգացման կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ ռազմավարությունը: Հայեցակարգը ներառում է ուսուցման մեթոդների, ուսումնառության ձևերի և գնահատման տեխնիկաների զարգացում՝ ուղղված նախնական գիտելիքների տարբերությունների հաղթահարմանը, բազմազան նախնական փորձառությունների ինտեգրմանը և ներառականության հետ կապված կարծրատիպերի հաղթահարմանը:

Փորձագիտական գնահատում

ՀՊՏՀ-ն ցուցաբերում է հստակ հանձնառություն իր կրթական ենթակառուցվածքների և ռեսուրսների զարգացումը ռազմավարական նպատակների հետ համահնչեցնելու հարցում:

Համալսարանի ֆինանսական պլանավորման և ուսուսման միջավայրի բարելավման կառուցվածքային մոտեցումն արձանագրվել և բարձր է գնահատվել այցի ընթացքում:

Փորձագիտական այցի քննարկումները ևս հաստատեցին թվային գործիքների, հատկապես Moodle հարթակի արդյունավետ կիրառումը թե՛ աշխատակազմի, թե՛ ուսանողների կողմից, ինչը դրականորեն է անդրադառնում դասավանդման և ուսուսման գործընթացի վրա:

Թվային և ֆիզիկական ուսուսման միջավայրերը, ինչպես նաև ակադեմիական ռեսուրսների հասանելիությունը ուսանողների կողմից գնահատվել են բավարար: Թվային հարթակների ինտեգրումը նպաստել է ռեսուրսների հասանելիության ընդլայնմանը, իսկ գրադարանային ռեսուրսների թվայնացումը հատկապես օգտակար է գնահատվել ինքնուրույն ուսուսման համար: Ուսանողները նաև ակտիվորեն օգտագործում են QR կոդերի վրա հիմնված գործիքները և էլեկտրոնային գրադարանային կատալոգը:

Ուսուսման տարածքները գործում են նպատակային և համապատասխանաբար հագեցված են: Շարունակական վերանորոգման նախաձեռնությունները դիտվում են որպես դրական քայլեր, որոնց շարունակական իրականացումը կնպաստի ուսուսման միջավայրի հետագա բարելավմանը ֆակուլտետների մակարդակում:

ՀՊՏՀ-ում ակտիվորեն իրականացվում են ներառական կրթության նախաձեռնություններ: Հաստատությունը ցուցաբերում է ուսանողական բազմազան կարիքների ընկալում՝ ներքին համապատասխան կարգավորումների ընդունման և մասնագիտացված կազմակերպությունների հետ գործընկերության միջոցով:

Հաստատությունը ձևավորել է լայնածավալ և ձկուն ուսանողական աջակցության համակարգ, որը գործում է թե՛ ինստիտուցիոնալ կառուցվածքների, թե՛ ուսանողակենտրոն նախաձեռնությունների համադրությամբ: Ուսանողները կարևորել են ակադեմիական խորհրդատուների հասանելիությունը և առաջին ուսուսման տարվա ընթացքում իրենց տրամադրված աջակցության արդյունավետությունը:

Հաստատվել է, որ ուսանողական խորհուրդը նույնպես ունի ակտիվ դերակատարում ուսանողների աջակցման գործընթացներում՝ կապված ուսանողական կյանքի տարբեր կողմերի հետ: Ուսանողները նշել են նաև, որ պարբերաբար ստանում են տեղեկատվություն ակադեմիական և մասնագիտական զարգացման հնարավորությունների վերաբերյալ՝ ներքին հաղորդակցական ուղիների միջոցով: Բացի այդ, կարիերայի կենտրոնը գնահատվել է որպես աջակցող կառույց՝ ուսանողների պրակտիկաների կազմակերպման և մասնագիտական կողմնորոշման գործընթացում:

Հաստատությունը համակարգային կերպով գնահատում է ուսանողական աջակցության ծառայությունները՝ ուսանողների և դասախոսական կազմի ներգրավմամբ գործող հետադարձ կապի մեխանիզմների միջոցով:

Եզրակացություն

Չափանիշը գնահատվում է բավարար:

10. ՀԱՆՐՈՒԹՅԱՆԸ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՈՒՄ

Հաստատությունը հրապարակում է իր գործունեության մասին տեղեկատվություն, ներառյալ կրթական ծրագրերը: Հրապարակված տեղեկատվությունը հստակ է, ճշգրիտ, օբյեկտիվ, արդիական և հեշտ հասանելի: [ESG, 1.8]

Համաձայն ՀՊՏՀ-ի ինքնավերլուծության՝ համալսարանի հանրային կապերի քաղաքականությունը ներառում է տեղեկատվության տրամադրում կրթական ծրագրերի և շնորհվող որակավորումների վերաբերյալ՝ մասնագիտությունների, կառուցվածքի, գործառույթների, վարձավճարների, ինչպես նաև համալսարանի միջազգային գործունեության մասին: ՀՊՏՀ գործունեությունը կարգավորող նորմատիվ փաստաթղթերը (կանոնակարգեր, ընթացակարգեր և այլն), ինչպես նաև Համալսարանի խորհրդի և Գիտական խորհրդի նիստերի արձանագրություններն ու որոշումները, հաստատության հավատարմագրման կարգավիճակը հասանելի են շահակիցներին ՀՊՏՀ պաշտոնական կայքէջում:

Ըստ ինքնավերլուծության՝ ՀՊՏՀ կայքում առկա են «Դիմորդներ» և «Միջազգային ուսանողներ» բաժինները, որոնք տրամադրում են ընդունելության, կրթական ծրագրերի, կապի միջոցների և տվյալ շահակից խմբերին անհրաժեշտ այլ տեղեկատվություն:

ՀՊՏՀ-ի միջազգային հարաբերությունների բաժինն իրականացնում է առցանց խորհրդատվություններ միջազգային շահակիցների համար, ինչի միջոցով միջազգային ուսանողները և այլ շահագրգիռ կողմեր կարող են անմիջական կապ հաստատել համալսարանի հետ և ստանալ իրենց հարցերի պատասխանները: ՀՊՏՀ-ի կայքը տեղեկատվություն է տրամադրում երեք լեզվով՝ հայերեն, անգլերեն և ռուսերեն, որոնք պարբերաբար թարմացվում են ՀՊՏՀ մարքեթինգի և հանրային կապերի բաժնի կողմից:

Ինքնավերլուծությունում նշվում է, որ ՀՊՏՀ-ն ունի ակտիվ մասնակցություն սոցիալական մեդիա հարթակներում (Facebook, Instagram, LinkedIn, YouTube), որտեղ պարբերաբար հրապարակում է կրթական ծրագրերի, շնորհվող որակավորումների, ընդունելության ընթացակարգի և այլ տեղեկատվություն: ՀՊՏՀ ընդունելության հանձնաժողովը նաև իրականացնում է պարբերական առցանց և անհատական խորհրդատվություններ՝ շահակիցներին ծրագրերի և որակավորումների վերաբերյալ տեղեկատվություն տրամադրելու և նրանց հարցերին պատասխանելու համար:

Ինքնավերլուծության համաձայն՝ ՀՊՏՀ-ի և կրթական ծրագրերի վերաբերյալ հասանելի են նաև տպագիր տեղեկատվական բուկլետներ, որոնք ներկայացնում են թե՛ ընդունելության գործընթացը, թե՛ ուսանողների կողմից ձեռք բերվող գիտելիքներն ու հմտությունները:

Զեկույցում ևս նշվում է, որ ՀՊՏՀ-ն պարբերաբար մասնակցում է միջազգային առցանց կրթական ցուցահանդեսների՝ միջազգային հարթակներում իր կրթական ծրագրերը ներկայացնելու և տարբեր երկրներից շահակիցների ուշադրությունը գրավելու նպատակով: Բացի այդ, ՀՊՏՀ-ն համագործակցում է միջնորդ կազմակերպությունների հետ, որոնք իրենց երկրներում ներկայացնում են համալսարանի կրթական ծառայությունները շահակիցներին:

Փորձագիտական գնահատում

ՀՊՏՀ-ն ձևավորել է տեսանելի հանրային տեղեկատվության համակարգ, որը նպատակ ունի ապահովել թափանցիկություն և մատչելիություն իր ակադեմիական առաջարկների, ինստիտուցիոնալ գործունեության և որակի ապահովման համակարգի վերաբերյալ: Համալսարանի պաշտոնական կայքը ծառայում է որպես հիմնական հարթակ՝ կրթական ծրագրերի մասին տեղեկատվությունը շահակիցների լայն շրջանակներին՝ ներառյալ ապագա ուսանողներին, ծնողներին, գործատուներին, ակադեմիական գործընկերներին և կարգավորող մարմիններին տրամադրելու համար:

Կայքում ներկայացված տեղեկատվությունն ընդգրկում է ծրագրերի հիմնական տարրերը՝ ուսուցման արդյունքներ, ուսուցման պլաններ, կրեդիտների կառուցվածք, շնորհվող որակավորումներ և ընդունելության չափանիշներ: Տեղեկատվությունը հիմնականում մատուցվում է հստակ և կառուցվածքային ձևաչափով: Այնուամենայնիվ, փորձագիտական խումբը նշում է, որ անզլերեն բովանդակության հասանելիությունն ու ամբողջականությունն անհամաչափ են տարբեր ֆակուլտետներում և կրթական ծրագրերում, ինչը կարող է սահմանափակել շարժունության և համագործակցության շրջանակները: Որոշ դեպքերում կարևոր փաստաթղթեր, օրինակ՝ ծրագրերի նկարագրություններ, առարկայական նկարագրեր կամ ռազմավարական փաստաթղթեր, ամբողջությամբ չեն թարգմանվել կամ առկա չեն անզլերեն տարբերակով: Համալսարանին առաջարկվում է ապահովել, որ բոլոր հիմնական նյութերն ու տեղեկատվությունը հասանելի լինեն նաև անզլերենով (Խորհրդատվություն 18):

Բացի այդ, օգտատերերի համար կայքի հարմարավետությունն ու որոնողական գործառնությունները դեռևս բարելավման կարիք ունեն: Չնայած կայքում առկա են առանձին բաժիններ դիմորդների, ուսանողների, անձնակազմի և միջազգային գործընկերների համար, որոշ տեղեկություններ մասնատված են կամ դժվար գտնելի՝ առանց համալսարանի ներքին կառուցվածքի նախնական ծանոթության: Կայքի կառուցվածքային արդիականացումն ու բարելավումը՝ որոնման ընդլայնված գործառնությունների, փաստաթղթերի դասակարգման և միասնական պորտալների ներդրման միջոցով, կարող է զգալիորեն բարձրացնել մատչելիությունն ու օգտագործելիությունը: Համալսարանի ներկայացուցիչները նշել են, որ նախատեսվում է հաստատության կայքի համապարփակ թարմացում, իսկ հարթակի ամբողջական վերաձևավորումը նախատեսվում է իրականացնել՝ կառուցվածքը, մատչելիությունը և օգտագործողի փորձը բարելավելու համար:

Մեկ այլ դիտարկում վերաբերում է հրապարակայնորեն մատչելի փաստաթղթերի իրական տվյալներին և համապատասխանությանը: Մասնավորապես, մի շարք հիմնական փաստաթղթեր՝ օրինակ՝ Ուսանողի ձեռնարկը և որոշ ֆակուլտետային ուղեցույցներ, հնացած են կամ անհամապատասխան կրթական ծրագրերում կատարված վերջին փոփոխություններին: Խորհուրդ է տրվում համալսարանին ներդնել պարբերական ստուգումների և համակարգված տարբերակների կառավարման մեխանիզմներ՝ ապահովելու, որ հանրային դաշտում հասանելի լինեն միայն թարմացված և վավերացված տարբերակները (Խորհրդատվություն 19):

Համալսարանը տրամադրում է ընդհանուր տեղեկատվություն ուսանողական աջակցման ծառայությունների մասին, ներառյալ՝ ակադեմիական խորհրդատվություն, խորհրդատվական ծառայություններ, ՏՏ աջակցություն և կարիերայի զարգացման հնարավորություններ: Ավելի

կենտրոնացված և թվայնացված ուսանողական աջակցության պորտալի ներդրումը կարող է նպաստել ինչպես դիմորդների, այնպես էլ ուսանողների համար մատչելիության և հստակության բարձրացմանը: Բացի այդ, աջակցման ծառայությունների վերաբերյալ տեղեկատվության տրամադրումն անգլերենով կբարձրացնի ծառայությունների արդյունավետությունը միջազգային ուսանողների և այցելուների համար:

Մասնագետները նաև նշել են տվյալների կառավարման և կիրառական տեխնոլոգիաների բարելավման կարիք ունեցող ոլորտները: Չնայած համալսարանը ներդրել է ընդհանուր SS ենթակառուցվածք՝ ապահովելու կրթական և վարչական գործառույթները, հանրային դաշտում սահմանափակ է տեղեկատվությունը տվյալների պաշտպանության քաղաքականությունների, կիրառական տեխնոլոգիաների կանոնակարգերի և SS աուդիտի մեխանիզմների վերաբերյալ: Բարձրագույն կրթության աճող թվայնացման պայմաններում այս ոլորտներում հրապարակայնորեն ձևակերպված քաղաքականությունների և ընթացակարգերի առկայությունը համարվում է կարևոր պահանջ: Տվյալների գաղտնիության ապահովումը, մասնավորապես՝ ուսանողների անձնական տվյալների և ուսումնական ձեռքբերումների պաշտպանությունը, ինստիտուցիոնալ հաշվետվողականության հիմնարար բաղադրիչ է: Ուստի խստորեն խրախուսվում է հստակ և մատչելի քաղաքականությունների ներդրումը տվյալների պաշտպանության և SS ռիսկերի կառավարման ոլորտում (Խորհրդատվություն 20):

Եզրակացություն

Չափանիշը գնահատվում է բավարար:

Փորձագիտական խմբի առաջարկություններ

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանը ներդրել է որակի ներքին ապահովման հաստատուն համակարգ, որը ներդաշնակ է հաստատության ռազմավարական զարգացման նպատակներին: Համալսարանի ֆինանսական պլանավորման համակարգային մոտեցումը և ուսումնական միջավայրի շարունակական կատարելագործումը դիտարկվում են որպես կայուն ինստիտուցիոնալ զարգացման ամուր նախադրյալներ:

Հատկապես գնահատելի են ՀՊՏՀ-ի հետևողական ջանքերը՝ ձևավորելու ուսանողակենտրոն և ներառական կրթական միջավայր: Համալսարանը մշակել և կիրառում է հետադարձ կապի մշտադիտարկման և վերլուծության մեխանիզմներ, որոնք հնարավորություն են տալիս ապահովելու կրթական ծրագրերի և ինստիտուցիոնալ գործունեության շարունակական բարելավումը:

Խորհրդատվություններ

1. Շահակիցների կողմից պարտականությունների, աշխատանքային հոսքերի և դրանց փոխկապակցվածության ընկալելիությունը բարձրացնելու համար նպատակահարմար է համալսարանի հիմնական որակի ապահովման գործընթացները ներկայացնել համակարգային և վիզուալ ձևաչափով:
2. Առաջարկվում է որակի ապահովման ստորաբաժանման շրջանակում սահմանել պատասխանատվությունների բաժանում՝ ապահովելու համալսարանի ռազմավարական ծրագրի իրականացման արդյունքների գնահատումը հիմնարար ցուցիչների միջոցով, ինչպես նաև կազմակերպելու հաստատության ինստիտուցիոնալ կարողությունների գնահատումն ու վերլուծությունը՝ ստեղծելով առանձին միավոր, որը պատասխանատու կլինի ռազմավարության իրականացման և մշտադիտարկման համար:
3. Խորհուրդ է տրվում առանձնացնել երկարաժամկետ, միջնաժամկետ և կարճաժամկետ պլանավորումը՝ յուրաքանչյուրի համար սահմանելով հստակ գնահատման առանցքային ցուցիչներ (KPI)՝ համալսարանի առաքելության, տեսլականի և ռազմավարական նպատակների իրագործման անհրաժեշտ գործողությունների պարզաբանման նպատակով:
4. Տարեկան հաշվետվությունների արդյունավետությունը բարձրացնելու նպատակով անհրաժեշտ է դրանցում ներառել վերլուծական բաղադրիչներ՝ հիմնված SMART սկզբունքների վրա: Սա հնարավորություն կտա միջնաժամկետ և տարեկան նպատակների իրականացման աստիճանը գնահատել չափելի և վավեր տվյալների հիման վրա:
5. Չնայած շահակիցների ներգրավվածությունն ապահովված է տարբեր փուլերում և տարբեր գործիքների միջոցով, նպատակահարմար է կատարել շահակիցների քարտեզագրման մեթոդաբանական բարելավում՝ հատկապես գործատուների և շրջանավարտների մասնակցության համակարգված և շարունակական ապահովման համար:

6. Անհրաժեշտ է վերանայել ուսումնասիրության վերջնարդյունքների ձևակերպումները՝ ապահովելու դրանց ամբողջականությունը, համապատասխանությունը միջազգային չափանիշներին և համադրելիությունը: Սա կնպաստի ուսանողների շարժունության և աշխատաշուկայում մրցունակության բարձրացմանը:
7. Գործընթացների թափանցիկությունն ու երկարաժամկետ պլանավորումը բարձրացնելու նպատակով նպատակահարմար է ծրագրերի դադարեցման կարգը ներառել առանձին փաստաթղթով կամ հստակ ձևակերպել այն կրթական ծրագրերի մշակման և մշտադիտարկման կանոնակարգում:
8. Անհրաժեշտ է ձեռնարկել միջոցառումներ՝ որակի ապահովման գործընթացներում շահակիցների ներգրավվածության մակարդակը պահպանելու և բարձրացնելու համար, հատկապես՝ հարցումների մասնակցության դեպքում:
9. Անհրաժեշտ է մշակել հստակ ուղեցույցներ՝ հարցումների ցածր մասնակցության պարագայում դրանց արդյունքների վերլուծության և մեկնաբանության համար՝ ապահովելով եզրակացությունների արժանահավատությունն ու ներկայացուցչականությունը:
10. Անհրաժեշտ է ներդնել ուսանողների ակադեմիական իրական բեռնվածության վերաբերյալ հետադարձ կապի հավաքագրման ֆորմալացված և անանուն մեխանիզմ՝ որպես դասընթացների գնահատման բաղադրիչ:
11. Համալսարանական մակարդակում անհրաժեշտ է բարելավել ազգային և հատկապես միջազգային գիտական և մասնագիտական գրականության (դասագրքեր, մենագրություններ, գիտական ամսագրեր) հասանելիության ենթակառուցվածքները:
12. Չնայած UMS համակարգի արդյունավետ կիրառմանը ուսանողների և դասախոսների կողմից՝ նպատակահարմար է ապահովել Moodle համակարգի ավելի լայն և խորքային ինտեգրումը:
13. Համալսարանը պետք է հաստատի ոչ ֆորմալ և ինֆորմալ ուսումնասիրության ճանաչման հստակ ընթացակարգեր:
14. Անհրաժեշտ է մշակել ուսուցման և գիտահետազոտական գործունեության որակի գնահատման ավելի հստակ և կառուցվածքային մեխանիզմներ՝ ներառյալ չափանիշների հստակ սահմանումը:
15. Խորհուրդ է տրվում ուսումնական ծրագրերում որպես գրականություն ներառել առկա գիտական ամսագրերը՝ խթանելու հետազոտության և ուսուցման կապը:
16. Համալսարանը պետք է մշակի համապարփակ գիտահետազոտական քաղաքականություն և արհեստական բանականության քաղաքականություն, որոնք կսահմանի հիմնարար սկզբունքները, կառավարման կառուցվածքները և ընթացակարգերը՝ ապահովելով թափանցիկություն և հետևողականություն հետազոտական, կրթական և վարչական գործընթացներում:
17. Գիտահետազոտական գործունեության միջազգայնացումը պետք է խթանվի և ներառվի դասախոսական կազմի տարեկան գնահատման գործընթացում:

18. Համալսարանը պետք է ապահովի, որ ամբողջ հրապարակային տեղեկատվությունը և հիմնարար փաստաթղթերը հասանելի լինեն նաև անզլերեն:
19. Անհրաժեշտ է ներդնել պարբերական ստուգումներ և համակարգային տարբերակների վերահսկողություն՝ ապահովելու, որ հրապարակային դաշտում հասանելի լինեն միայն թարմ և վավերացված տարբերակները:
20. Խորհուրդ է տրվում ներդնել տվյալների պաշտպանության և SS ռիսկերի կառավարման վերաբերյալ հստակ և ամբողջ համալսարանին վերաբերող քաղաքականություններ: